KONRAD ADENAUER STIFTUNG

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՎԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ՝ ՈՒԿՐԱԻՆԱՅՈՒՄ ՎԱՐԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ՝ Արմեն Քթոյան, Աստղիկ Խաչատրյան, Անուշ Շիրինյան

ԵՐԵՎԱՆ
Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ
2023

Խմբագիր՝ Աննա Բաղդասարյան
Հեղինակներ՝ տ.գ.թ. Արմեն Քթոյան, տ.գ.թ. Անուշ Շիրինյան, Աստղիկ Խաչատրյան

© Կոնրադ Ադենաուեր հիմնադրամ (գ. մ.) հայաստանյան մասնաճյուղ, 2022
© Ա. Քթոյան, Ա. Շիրինյան, Ա. Խաչատրյան

Բովանդակություն

Ներածություն 05

1.Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության ֆինանսաբանկային հատվածի վրա (հեղ.՝ Արմեն Քթոյան) 07

2. Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության արտաքին հատվածի վրա. արտահանում և ներմուծում (հեղ.՝ Աստղիկ Խաչատրյան) 23

3. Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա (հեղ.՝ Անուշ Շիրինյան) 41

Ամփոփում 61

Օգտագործված աղբյուրներ (ըստ հղման հերթականության) 67

Ներածություն

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը բազմավեկտոր ազդեցություն ունի ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը տասնյակ հազարավոր այցելուների համար դարձել է ժամանակավոր կեցության վայր, տնտեսական շահերի յուրօրինակ կենտրոն, դրանից բխող՝ այդ թվում նաև ֆինանսատնտեսական բնույթի, գործառնություններով: Բացի այդ, ռուսական տնտեսական համակարգում ի հայտ են գալիս ազատ շուկայական խորշեր, որոնք ՀՀ-ից արտահանման խթանման, վերաարտահանման գործառնությունների համար պարարտ հող են հանդիսանում: Մյուս կողմից, հայաստանյան տնտեսական համակարգը որոշակիորեն կրում է ՌԴ նկատմամբ սահմանված պատժամիջոցների ազդեցությունը: Բացի այդ, տնտեսության վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ միջնորդավորված կամ անուղղակի հարթություններում:

Հետազոտությունը նպատակն է համակողմանի ուսումնասիրության ենթարկել ՀՀ տնտեսության վրա պատերազմի ազդեցությունը: Մասնավորապես, կատարվել է ՀՀ ֆինանսաբանկային, արտաքին տնտեսական և իրական հատվածներում նոր՝ պատերազմական իրողությունների պայմաններում ձևավորված իրավիճակի համակարգային վերլուծություն: Բացի այդ, ուսումնասիրվել են ՀՀ տնտեսության վրա պատերազմի ազդեցությամբ պայմանավորված ի հայտ եկած առավել էական սպառնալիքներն ու մարտահրավերները: Նաև գնահատվել են այն պոտենցիալ հնարավորությունները, որոնք միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում առկա են՝ պայմանավորված պատերազմական իրավիճակով:

Հետազոտության տվյալների աղբյուր են հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի, Վիճակագրության կոմիտեի, այլ պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների հրապարակումներն ու պարբերականները: Հետազոտությունում օգտագործվել են վերլուծության, համադրման, փաստարկման, համակարգային դիտարկման և այլ գիտականորեն հիմնավորված մեթոդական սկզբունքներ, նաև՝ հեղինակների փորձագիտական գնահատումների արդյունքները:

1 Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության ֆինանսաբանկային հատվածի վրա (հեղ.՝ Արմեն Քթոյան)

Հետազոտության այս հատվածում հիմնական նպատակը ՀՀ ֆինանսաբանկային համակարգի վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցության, դրանով պայմանավորված հնարավորությունների և մարտահրավերների ուսումնասիրությունն է, նաև՝ ստեղծված նոր իրողությունների պայմաններում համակարգի կենսունակության և կայունության պահպանման ուղիների դիտարկումը:

ՀՀ տնտեսության վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցության գլխավոր ուղղություններից մեկը ՌԴ-ից Հայաստան դրամական փոխանցումների ծավալների որակական աճն է: Այսպես, 2015-2021թթ. բանկային համակարգով ՌԴ-ից ֆիզիկական անձանց կողմից Հայաստան կատարված փոխանցումների ներհոսքի ամսական ծավալը շատ քիչ դեպքերում է, որ գերազանցել է 100 մլն ԱՄՆ դոլարը, իսկ առավել արգասաբեր համարվող ամիսներին, որպես կանոն, տատանվել է 80-100 մլն ԱՄՆ դոլարի սահմաններում:



Գծապատկեր 1.1. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով ՌԴ-ից մուտք եղած ամսական փոխանցումները[1]

Հարկ է արձանագրել, որ 2014-ին և դրանից առաջ ՌԴ-ից Հայաստան դրամական փոխանցումները, արտարժութային, նաև՝ դրամային արտահայտությամբ, էականորեն ավելի բարձր էին 2015թ. և դրանից հետո արձանագրված մակարդակից, ինչն, առաջին հերթին, պայմանավորված է Ղրիմի շուրջ ծավալված իրադարձությունների համապատկերում ՌԴ նկատմամբ սահմանված պատժամիջոցների տնտեսական արդյունքով:

Դեպի ՀՀ անձնական դրամական փոխանցումները 2013 թ.-ին գերազանցել են 2 մլրդ ԱՄՆ դոլարը, սակայն 2014 թ.-ից հետո ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցների և նավթի գների անկման հետևանքով ռուբլու արժեզրկումը հանգեցրել է ՀՀ եկող դրամական փոխանցումների էական կրճատման: 2015 թ.-ին, 2014 թ.-ի համեմատ, տրանսֆերտները 2 մլրդ ԱՄՆ դոլարից իջել են

1 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx):

1,4 մլրդ ԱՄՆ դոլարի շեմին՝ անկում ապրելով շուրջ 30%-ով, և սա այն դեպքում, երբ տարբեր գնահատականներով 2014 թ.-ի պատժամիջոցները ՌԴ ՀՆԱ-ի վրա տարեկան ունեցել են 0,2-2% զսպող ազդեցություն[2]:

Ըստ այդմ, 2014-ին ՌԴ-ից Հայաստան բանկային համակարգով ֆիզիկական անձանց կողմից արված դրամական փոխանցումների միջին ամսական մեծությունը կազմել է շուրջ 130 մլն ԱՄՆ դոլար (54 մլրդ ՀՀ դրամ), 2013-ին՝ 144 մլն ԱՄՆ դոլար (59 մլրդ ՀՀ դրամ), 2012-ին՝ 137 մլն ԱՄՆ դոլար: Հետճգնաժամային 2010թ-ին ցուցանիշը գտնվել է 90 մլն ԱՄՆ դոլարի տիրույթում: 2015թ-ից հետո ՌԴ-ից Հայաստան ֆիզիկական անձանց դրամական փոխանցումներն էապես կրճատվեցին. 2015-ին միջին ամսական ցուցանիշը նվազել է մինչև 84 մլն ԱՄՆ դոլարի (40 մլրդ ՀՀ դրամ), 2016թ-ին կազմել է 74 մլն ԱՄՆ դոլար (36 մլրդ ՀՀ դրամ), 2019-ին՝ 88 մլն ԱՄՆ դոլար (42 մլրդ ՀՀ դրամ): Համաճարակային խիստ սահմանափակումների և 44-օրյա պատերազմի առաջադրած սուր մարտահրավերների տարում՝ 2020թ-ին, ՌԴ-ից Հայաստան դրամական փոխանցումների միջին ամսական մեծությունն էլ ավելի է կրճատվել՝ հասնելով 69 մլն ԱՄՆ դոլարի (34 մլրդ ՀՀ դրամ), որը հետագա տարում չնայած որոշ չափով ավելացավ՝ մինչև 72 մլն ԱՄՆ դոլարի (36 մլրդ ՀՀ դրամ), այնուհանդերձ այդ բոլոր մակարդակները համադրելի չեն 2022թ. փետրվարից հետո արձանագրվածի հետ: Այսպես, 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ՌԴ-ից Հայաստան ֆիզիկական անձանց կողմից բանկային համակարգով արված փոխանցումները ամսական միջինի կտրվածքով կազմել են շուրջ 340 մլն ԱՄՆ դոլար (142 մլրդ ՀՀ դրամ):

2015-2021թթ. ՌԴ-ից Հայաստան դրամական փոխանցումների տարեկան միջին ծավալը կազմել է շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2022-ի միայն մարտ-նոյեմբեր ամիսների հանրագումարը գերազանցել է 3 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանաչափը:

Զուտ դրամական ներհոսքի համեմատությունը ապրիլ-նոյեմբեր ժամանակահատվածների համար, ըստ տարիների:



Գծապատկեր 1.2. ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով ՌԴ-ից մուտք եղած ամսական փոխանցումներ, ապրիլ-նոյեմբեր[3]

Հարկ է նկատել, որ դիտարկվող տարիներին առկա է ոչ միայն դրամական փոխանցումների նշանակալի ներհոսք ՌԴ-ից Հայաստան, այլ նաև գործ ունենք զգալի ծավալների դրամական արտահոսքի հետ: Ուստի ՀՀ տնտեսությունում ամբողջական պահանջարկի վրա դրամական փոխանցումների ազդեցության լիարժեք ուսումնասիրության համատեքստում կարևորվում է ՌԴ-Հայաստան դրամական փոխանցումների զուտ ներհոսքին (այսինքն՝ ներհոսքից հանած արտահոսքը) անդրադարձը: Ըստ այդմ, Ռուսաստանից Հայաստան բանկային համակարգով կատարված ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների տարեկան զուտ ներհոսքը 2015-2021թթ. կազմել է առավելագույնը 722 մլն ԱՄՆ դոլար (350 մլրդ ՀՀ դրամ), Ղրիմի իրադարձություններով պայմանավորված պատժամիջոցների սահմանումից առաջ դրամական

2 Թադևոսյան Ռ. Ռուս-ուկրաինական հակամարտություն. տրանսֆերտներ/ Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 80:

3 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx):

փոխանցումների զուտ ներհոսքի առավելագույն տարեկան մակարդակը կազմել է 1,3-1,5 մլրդ ԱՄՆ դոլար (540-610 մլրդ ՀՀ դրամ): Մինչդեռ 2022-ի ապրիլ-նոյեմբեր ոչ լրիվ տարվա զուտ ներհոսքի հանրագումարը կազմել է շուրջ 2,7 մլրդ ԱՄՆ դոլար (1,1 տրլն ՀՀ դրամ, գծ. 1.2):

2022-ին ՌԴ-ից դրամական փոխանցումների զուտ ներհոսքի մակարդակը (ԱՄՆ դոլարով արտահայտած) ավելին է, քան 2018-2021թթ. բոլոր ուղղություններից դեպի Հայաստան բանկային համակարգով ֆիզիկական անձանց կողմից կատարված դրամական փոխանցումների զուտ ներհոսքի հանրագումարը, որը կազմել է շուրջ 2,6 մլրդ ԱՄՆ դոլար: Իսկ դրամային արտահայտությամբ 2018-2021թթ. բոլոր ուղղություններից Հայաստան բանկային համակարգով կատարված դրամական փոխանցումների զուտ ներհոսքը 1,25 տրլն ՀՀ դրամ է, ինչը ևս, մեր գնահատմամբ, կգիջի 2022թ. միայն ՌԴ-ից ՀՀ զուտ ներհոսքի տարեկան մակարդակին:



Գծապատկեր 1.3. ՀՀ բանկային համակարգի ավանդները[4]

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի սկզբնական շրջանում՝ առաջին 2-3 ամիսներին, ֆինանսական շուկաների մասնակիցների, ֆինանսական կառույցների շրջանում առանձնակի սրությամբ էին արտահայտվում բացասական կանխատեսումներն ու տրամադրությունները, ինչից ելնելով էլ՝ կենտրոնական բանկերը դրամավարկային քաղաքականությամբ փորձում էին առաջնահերթ զսպել գնաճը և հետևողականորեն պահպանել ֆինանսական կայունությունը, իսկ ներդրողներն իրենց վարքագիծը դարձնում էին էլ ավելի պահպանողական և փորձում արագորեն արձագանքել նոր ի հայտ եկող իրողություններին[5]:

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած ճգնաժամի ակտիվ փուլի մեկնարկից ի վեր, ընդհուպ մինչև 2022թ. նոյեմբերի վերջը, ՀՀ բանկային համակարգի ներգրաված ավանդների շոշափելի աճ է արձանագրվել՝ բացարձակ արտահայտությամբ հասնելով շուրջ 1 տրլն դրամի կամ 2022թ. փետրվարի մակարդակի համեմատությամբ ավելանալով 22%-ով: Հարկ է արձանագրել, որ նախորդ տարիների ընթացքում, չնայած բանկային համակարգում ավանդների ընդհանուր ծավալը ևս զգալիորեն աճել է, սակայն դիտարկվող ամիսների կտրվածքով ավանդների բացարձակ ավելացումը առավելագույնը կազմել է 500 մլրդ դրամ (գծ. 1.3):

2022թ. մարտ-նոյեմբերին ոչ ռեզիդենտներից բանկերի ներգրաված ավանդների ծավալը բացարձակ արտահայտությամբ ընդլայնվել է 570 մլրդ դրամով՝ 825 մլրդ դրամից հասնելով 1,4 տրլն դրամի (հավելաճի տեմպը՝ 70%): Ընդ որում, ոչ ռեզիդենտների ավանդների ընդհանուր ծավալի դիտարկվող ընթացիկ մակարդակը ՀՀ բանկային համակարգի համար պատմական

4 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

5 Տերյան Դ. Ֆինանսական շուկաների արձագանքը ռուս-ուկրաինական հակամարտությանը / Ամբերդ տեղեկագիր, # 2, 2022, էջ 29:

առավելագույնն է, իսկ վերջին 3-4 տարիներին ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների առավելագույն մակարդակն արձանագրվել է 2019 և 2020 թվականների տարեվերջին՝ 1 տրլն դրամի շրջանակում (գծ. 1.4):



Գծապատկեր 1.4. Ոչ ռեզիդենտներից ավանդների ներգրավումը բանկերի կողմից, նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ[6]

Ոչ ռեզիդենտների ավանդների շուրջ 86 տոկոսը արտարժույթով է: Ավելին, ոչ ռեզիդենտների արտարժութային ավանդների ծավալը 2022թ. մարտի մակարդակի համեմատությամբ 2022թ. նոյեմբերին ավելացել է 88 տոկոսով:

Ռեզիդենտներից ներգրավված ավանդների ընդհանուր մեծությունը ևս զգալի աճ է արձանագրել՝ 2022թ. մարտ-նոյեմբերի ամիսներին բացարձակ ավելացումը կազմել է 400 մլրդ ՀՀ դրամ (աճը՝ շուրջ 13%): Ռեզիդենտների ավանդների ընդլայնված մասի շուրջ կեսը բաժին է ընկնում ցպահանջ հաշիվներում տեղաբաշխված ավանդներին: Դրանք ավելացել են 200 մլրդ դրամով, իսկ հարաբերական աճն ավելի պատկերավոր է՝ շուրջ 32% (գծ. 1.5):



Գծապատկեր 1.5. Ռեզիդենտներից ավանդների ներգրավումը բանկերի կողմից, նոյեմբերի ամսվա վերջի դրությամբ[7]

6 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

7 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

ՀՀ առևտրային բանկերի տրամադրած վարկերի պարագայում, ի տարբերություն ավանդների ներգրավման, դիտարկվող ժամանակահատվածում բոլորովին այլ միտումներ են արձանագրվել: Այսպես, 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին բանկերի տրամադրած վարկերի ընդհանուր մեծությունը որևէ զգալի փոփոխություն չի արձանագրել: Մյուս կողմից, եթե նկատի ունենանք, որ 2021-ի առաջին կեսում, դրան նախորդող տարվա համեմատությամբ, վարկավորման ծավալների ընդլայնումը 2021-ի երկրորդ կեսում վերափոխվել է որոշակի կրճատման: Եվ այս համապատկերում 2022-ին արձանագրված մակարդակը 2021թ. երկրորդ կիսամյակի համեմատ վարկավորման որոշակի աշխուժացում է ենթադրում, ինչը, սակայն ամեն դեպքում համադրելի չէ ավանդների ծավալը էական ընդլայնման հետ (գծ. 1.6):



Գծապատկեր 1.6. Բանկերի տրամադրած վարկերը, ամսական[8]

Առևտրային բանկերի վարկային պորտֆելի 95%-ը կազմում են ռեզիդենտներին տրամադրված վարկերը: Ուշագրավ է, որ 2022-ի դիտարկվող ամիսներին, չնայած ռեզիդենտներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը գրեթե չի փոփոխվել, սակայն կառուցվածքային առումով առկա են որոշ տեղաշարժեր: Այսպես, 2022թ. մարտ-նոյեմբեր ժամանակահատվածում ռեզիդենտ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 170 մլրդ դրամով կամ շուրջ 10 տոկոսով: Միևնույն ժամանակ, գրեթե նույն չափով և տրամաբանությամբ նվազել են ռեզիդենտ ձեռնարկություններին տրամադրված վարկերը (գծ. 1.7):



Գծապատկեր 1.7. Ռեզիդենտների վարկավորումը բանկերի կողմից, մլրդ դրամ, նոյեմբեր ամսվա վերջի դրությամբ[9]

8 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

9 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

Հատկանշական է, որ ռեզիդենտ ձեռնարկությունների արտարժույթով վարկավորման ծավալներն էլ ավելի մեծ կրճատում են արձանագրել՝ շուրջ 250 մլրդ դրամով կամ 20%-ով: Վերջինը զգալիորեն նաև ՀՀ դրամի արժևորման արդյունք է: Այս համատեքստում դրական միտում պետք է դիտարկել ձեռնարկությունների վարկավորման կառուցվածքում արտարժութային վարկերի մասնաբաժնի զգալի նվազումը՝ տարեսկզբի 70 տոկոսից ցուցանիշը 2022թ. նոյեմբերին հասել է մինչև 62 տոկոսի:



Գծապատկեր 1.8. Ռեզիդենտներին տրված վարկերն ըստ արժույթի, նոյեմբերի վերջի դրությամբ, մլրդ դրամ[10]

Ընդհանուր առմամբ, ՀՀ ֆինանսական համակարգում հետճգնաժամային փուլերին բնորոշ դրսևորումներից է արտարժութային վարկավորման տեմպերի առաջանցիկ աճը, որի տարբեր ինտենսիվությամբ դրսևորումները կարելի է նկատել 2008-2009թթ. ճգնաժամին հաջորդած ողջ ընթացքում: Ի հակադրություն նկարագրվածի, 2020թ. ճգնաժամերին հաջորդած ժամանակահատվածում դրամով վարկավորումը շարունակում է պահպանել դրան նախորդած տարիներին արձանագրված աճի առաջանցիկությունը՝ ի հակադրություն արտարժութային վարկերի շոշափելի կրճատման (գծ. 1.8):



Գծապատկեր 1.9. Ռեզիդենտներին տրված դրամով վարկերն ըստ ոլորտների, մլրդ դրամ[11]

10 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

11 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

Ռեզիդենտներին տրված դրամով վարկերը 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին շոշափելի աճ են արձանագրել՝ ավելի քան 300 մլրդ դրամով կամ 15 տոկոսով: Վերջին տարիներին մարտ-նոյեմբեր ամիսների համար ռեզիդենտների դրամով վարկավորման ընդլայնումը տեղի է ունեցել շատ ավելի համեստ չափով: Օրինակ, 2019-ին, երբ վարկավորման ակտիվացումը ևս շոշափելի էր, դիտարկվող ամիսների համար ընդլայնումը կազմել է ընդամենը 150 մլրդ դրամի չափով:

Հատկանշական է, որ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ռեզիդենտների դրամով վարկավորման ծավալների ավելացման կեսից ավելին բաժին է ընկել հիպոթեկային վարկին: Վերջինի կիրառմամբ վարկավորման ծավալները դիտարկվող ժամանակահատվածում ավելացել են 170 մլրդ դրամով կամ շուրջ 30 տոկոսով: Բանկերի սպառողական վարկերի պորտֆելը աճել է 70 մլրդ դրամով կամ ավելի քան 10 տոկոսով: Ներկայացվածի համատեքստում ընդհանուր միտման բացատրությունների շարքում է նաև շինարարության վարկավորման ծավալների ընդլայնումը՝ մարտի նկատմամբ 30 մլրդ դրամով կամ մոտ 24 տոկոսով (գծ. 1.9):

Ռեզիդենտների դրամով վարկավորման՝ հետճգնաժամային փուլի միտումների դիտարկումը թույլ է տալիս արձանագրել, որ, մասնավորապես, 2020թ. նոյեմբերից ի վեր, հիպոթեկային վարկավորման պորտֆելի կրկնապատկում է տեղի ունեցել, այն դեպքում, երբ սպառողական վարկավորման ծավալները մնացել են անփոփոխ: Բացի այդ, նույն ժամանակահատվածում շինարարության ոլորտում դրամային վարկավորման ծավալներն ավելացել են 2 անգամ, գյուղատնտեսության վարկային պորտֆելը ընդլայնվել է շուրջ 50 տոկոսով, առևտրի ոլորտում տեղաբաշխված վարկերի ծավալն աճել է 44 մլրդ դրամով կամ 25%-ով: Մյուս ոլորտներում ևս աճեր են արձանագրվել, սակայն՝ պակաս տպավորիչ տեմպով:



Գծապատկեր 1.10. Ֆիզիկական անձանցից մինչև 1տ. ժամկետով ավանդների տոկոսադրույքները[12]

Ֆինանսական շուկայում ձևավորված տոկոսադրույքները և ֆինանսական ակտիվներում միջոցների տեղաբաշխման ծավալների փոփոխությունները ուշագրավ տեղեկատվություն են պարունակում Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված իրողությունների՝ ֆինանսական համակարգում առաջացրած հետևանքների վերաբերյալ:

Չնայած այն հանգամանքին, որ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին բանկային համակարգում տեղաբաշխված ավանդների ընդհանուր ծավալի շոշափելի ընդլայնում է արձանագրվել, սակայն դա տեղի է ունեցել ավանդների տոկոսադրույքների ոչ էական փոփոխությունների համապատկերում: Ավելի ճշգրիտ, մասնավորապես՝ մինչև 1տ. ժամկետով

12 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

դրամային ավանդների տոկոսադրույքները դիտարկվող ամիսների ընթացքում նույնիսկ նվազել են՝ մարտ-ապրիլ ժամանակահատվածի 9,4-9,5 տոկոսից նույն տարվա նոյեմբերին հասնելով 8,4 տոկոսի: Արտարժութային ավանդների դեպքում տոկոսադրույքի, ճիշտ է՝ աննշան, սակայն վերստին նվազում կա (գծ. 1.10):

Ինչ վերաբերում է 1 տարին գերազանցող ժամկետով ներգրավվող դրամային ավանդների տոկոսադրույքներին, ապա դրանք ևս դիտարկվող ամիսներին էական փոփոխություն չեն արձանագրել՝ մարտին կազմել են 9,4%, իսկ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ 9,5-9,6%: Արտարժութային ավանդների տոկոսադրույքները 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ճշգրտվել են նվազման ուղղությամբ՝ 4,0%-ից հասնելով 3,8%-ի:



Գծապատկեր 1.11. ՀՀ ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը[13]

Մյուս կողմից, ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը, օրինակ՝ 2022թ. նոյեմբերի սկզբում կազմել է 10,5 տոկոս, այն դեպքում, երբ ընդհուպ մինչև նույն տարվա մարտի 15-ը այն կազմել է 8 տոկոս, իսկ մարտի 16-ից՝ 9,25% (գծ. 1.11): Արդ, մարտ-նոյեմբեր ամիսներին ԿԲ ռեպո տոկոսադրույքը աճել է 2,5 տոկոսային կետով, մինչդեռ բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքների ավելացում տեղի չի ունեցել: Հակառակը՝ գրանցվել է ավանդային տոկոսադրույքների որոշակի նվազում:

Ռուսաստանի՝Ուկրաինայումվարածպատերազմիսկզբնականշրջանումփորձագիտական որոշ շրջանակներում մտավախություններ կային, որ ՀՀ ԿԲ-ի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի կտրուկ բարձրացումը և հետագա բարձրացման սպասումները կարող են ստեղծել տոկոսադրույքների արագացող աճի փուլ, ինչը ռիսկեր է պարունակում հատկապես պարտատոմսերի շուկայի կայունության և պետական պարտքի կառավարման առումներով[14]: Հետագա զարգացումներում, սակայն, այսպիսի իրավիճակներից հնարավոր եղավ խուսափել:

13 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

14 Աղաբեկյան Է. Ռուս-ուկրաինական պատերազմը և ՀՀ ֆինանսական շուկան. ռիսկեր և սպասումներ / Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 22:



Գծապատկեր 1.12. Մինչև 1տ. ժամկետով վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը[15]

Առևտրային բանկերում մինչև 1 տարի ժամկետով վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդ) վերջին ամիսներին հետաքրքիր վայրիվերումներ է գրանցել: Այսպես, դրամային վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը 2022թ. հոկտեմբեր և նոյեմբերին գերազանցել է 7 տոկոսը, ինչը 2018թ. հունիսից ի վեր առավելագույն մակարդակն է (գծ. 1.12): Ըստ որում, տոկոսադրույքների սպրեդի որոշակի ավելացումը մի կողմից ավանդային տոկոսադրույքների նվազման արդյունք է, մյուս կողմից՝ պետք է հաշվի առնել նաև հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին դրամով կարճաժամկետ վարկերի տոկոսադրույքի՝ մարտի համեմատությամբ մեկ տոկոսային կետով ավելացման ազդեցությունը: Ըստ էության, վարկավորման տոկոսադրույքի աճը 2,5 անգամ ավելի ցածր տեմպով է, քան ԿԲ ռեպո տոկոսադրույքի ավելացումը:

Կարելի է արձանագրել, որ ՀՀ բանկերը, մի կողմից վարկերի տեղաբաշխումը կատարում են զգալի չափով սեփական միջոցների հաշվին, մյուս կողմից՝ հաշվի առնելով Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված ֆինանսատնտեսական գլոբալ համակարգում դեռևս պահպանվող բարձր մակարդակի անորոշությունը՝ վարկային ռիսկի արդյունավետ կառավարման հավելյալ գործիքներ են փորձում կիրառել:

Կարճաժամկետ արտարժութային գործիքների տոկոսադրույքների սպրեդը ընդհանուր նվազում է գրանցել՝ առավել կտրուկ կերպով անկում ապրելով մայիս-հուլիս ամիսներին՝ 8,5 տոկոսից նվազելով 3 տոկոսային կետով: Այն ամբողջությամբ բացատրվում է նույն ժամանակահատվածում արտարժույթով վարկերի տոկոսադրույքի նվազմամբ՝ 10,7 տոկոսից մինչև 7,4 տոկոս:

Ի հակադրություն նշվածի, 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին արտարժույթով երկարաժամկետ վարկերի տոկոսադրույքն ավելացել է երկու տոկոսային կետով: Նույնչափ ավելացել է նաև 1 տ. ավել ժամկետով արտարժութային վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (գծ. 1.13):

15 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):



Գծապատկեր 1.13. մեկ տարուց ավել ժամկետով վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը[16]

Դրամով վարկերի և ավանդների տոկոսադրույքի սպրեդը ևս ավելացել է, սակայն՝ շատ ավելի փոքր չափով՝ ընդամենը 0,5 տոկոսային կետով: Ըստ այդմ, բանկերը, ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրադրությունում, կարճաժամկետ դրական միտումները երկարաժամկետ հատվածի վրա տարածելու հարցում ունեն զգալի վերապահումներ: Ստեղծված իրավիճակում ռիսկերի կառավարման առավել ռացիոնալ տարբերակ է դիտվում երկարաժամկետ ռիսկերից հավելյալ ապահովագրությունը:

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2022թ. մարտ-նոյեմբերին ավելացել են շուրջ 1 տրլն դրամով՝ հասնելով 8 տրլն դրամի սահմանին: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում բանկային համակարգի ընդհանուր համակարգի ակտիվների աճը շատ ավելի համեստ չափով էր՝ մոտ 300 մլրդ դրամ, նմանատիպ բացարձակ հավելաճ է արձանագրվել նաև 2019-ին (գծ. 1.14):



Գծապատկեր 1.14. Բանկային համակարգի հաշվեկշռային ցուցանիշները, մլրդ դրամ, նոյեմբերի վերջի դրությամբ[17]

2022-ի նոյեմբերի դրությամբ ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի կուտակային մեծությունը հասել է աննախադեպ բարձր մակարդակի՝ գերազանցելով 190 մլրդ դրամը: Համեմատության համար փաստենք, որ 2021-ի նոյեմբերին բանկային համակարգի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը կազմել է ընդամենը 45 մլրդ դրամ, 2020թ-ին՝ 65 մլրդ դրամ, 2019-ին՝ 56 մլրդ դրամ (գծ. 1.15):

16 ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):

17 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx):



Գծապատկեր 1.15. Բանկային համակարգի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը /վնասը/[18]

Ընդհանրապես, 2013-2022թթ. ընթացքում բանկային համակարգի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի մեծությունը լավագույն դեպքում գտնվել է 50-65 մլրդ դրամի տիրույթում, իսկ 100 մլրդ դրամի շեմը նախկինում երբևէ չի գերազանցվել:

Բանկային համակարգի չբաշխված շահույթի՝ վերջին ամիսների ընթացքում կուտակված աննախադեպ մակարդակը առավելապես կարճաժամկետ, ոչ գործառնական բնույթի գործընթացների արդյունք հանդիսանալով, այնուհանդերձ ֆինանսական լևերիջի ոչ բարձր մակարդակի պայմաններում, ներքին միջոցների տեղաբաշխման ծավալների ընդլայնման, բանկային ռիսկերի արդյունավետ կառավարման լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:

ՀՀ վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշների շարժընթացը որոշակիորեն տարբերվում է բանկերի պարագայում արձանագրված արդյունքներից: Այսպես, 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվները, չնայած աճ են արձանագրել, սակայն բանկերի համեմատությամբ աճը շատ ավելի համեստ է՝ շուրջ 7% և որակապես չի տարբերվում նախորդ տարիների ընդհանուր միտումներից (գծ. 1.16):



Գծապատկեր 1.16. Վարկային կազմակերպությունների հաշվեկշռային ցուցանիշները, մլրդ դրամներով[19]

18 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx):

19 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx):

Վարկային կազմակերպությունների ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը 2022-ի նոյեմբերին կազմել է 26,4 մլրդ դրամ: Այս ցուցանիշը, չնայած երկու անգամ գերազանցում է 2021թ. նոյեմբերի մակարդակը, այնուհանդերձ, ի տարբերություն բանկային համակարգի, աննախադեպ համարել չի կարելի: 2017-2019թթ. վարկային կազմակերպություններին հաջողվել է արձանագրել չբաշխված շահույթի շատ ավելի բարձր մակարդակներ, ընդ որում՝ ռուս—ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված կամ նմանօրինակ նպաստավոր արտաքին շոկի բացակայության պայմաններում: Սա արտացոլում է այն իրողությունը, որ ՌԴ-ից Հայաստան տեղափոխված անձանց ֆինանսական սպասարկման գործընթացում վարկային կազմակերպությունների մասնակցությունը շատ ավելի համեստ է՝ իրենց գործիքակազմի (և հատկապես՝ ոչ գործառնական բնույթի ծառայություններից եկամտի գեներացման հնարավորությունների) էական սահմանափակությամբ պայմանավորված:

2022թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվի աճ է արձանագրվել: Այսպես, Ն1(2) նորմատիվի՝ ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին, արժեքը 2022թ. սեպտեմբեր-նոյեմբերի ընթացքում գերազանցել է 19%-ի շեմը, այն դեպքում, երբ տարեսկզբին գտնվել է 17-17,5 տոկոսի տիրույթում (գծ. 1.17):



Գծապատկեր 1.17. ՀՀ բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները[20]

Նույն կերպ, Ն2(1) նորմատիվը (բարձր իրացվելի ակտիվների հարաբերակցությունը ընդհանուր ակտիվների նկատմամբ) 2022թ. հոկտեմբերի վերջին կազմել է 36%, մինչդեռ տարեսկզբի մակարդակը կազմել է 31-32%:

Դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է նաև բարձր իրացվելի ակտիվների՝ ցպահանջ պարտավորությունների նկատմամբ առաջանցիկ աճ, ինչը դրսևորվել է Ն2(2) նորմատիվի որոշակի նվազմամբ:

Ընդհանուր առմամբ, դիտարկվող նորմատիվների աճն ի ցույց է դնում 2022թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգում ավելցուկային իրացվելիության ընդլայնման միտումները, ինչը բանկային համակարգում պոտենցիալ ռիսկերի նվազեցման խնդիրների լուծման հնարավորությունների ավելացման իրողության արտացոլումն է:

2022թ. երրորդ եռամսյակի վերջում ՀՀ բանկերի կողմից թողարկված, շրջանառության

20 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx):

մեջ գտնվող վճարային քարտերի քանակը գերազանցել է 3 մլն-ը, ինչը 2021թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատությամբ ավելի է 16 տոկոսով, այն դեպքում, երբ 2020-2021-ի նույն եռամսյակում քարտերի թվի աճը կազմել է միայն 5%: Հարկ է փաստել, որ 2022-ի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, շրջանառության մեջ գտնվող ԱՐՔԱ քարտերի քանակը նվազել է մոտ 5 տոկոսով, նույն միտումն առկա է նաև տարվա առաջին երկու եռամսյակներում (գծ. 1.18):



Գծապատկեր 1.18. ՀՀ բանկերի կողմից թողարկված, շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը[21]

Մյուս կողմից, ՀՀ բանկերի կողմից VISA քարտերի թողարկումը 2022թ. երրորդ եռամսյակում նախորդ տարվա համեմատությամբ աճել է 24%-ով, երկրորդ եռամսյակում ավելացումը կազմել է 21%, առաջինում՝ 15%: Համեմատության համար՝ 2021-ին, 2020-ի նկատմամբ սույն քարտերի թողարկման աճի տեմպը, ըստ եռամսյակների, միջինում կազմել է 5%:

Շոշափելի աճ է արձանագրվել այլ քարտերի թողարկման գործընթացում՝ 2022-ի երրորդ եռամսյակում աճի նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է շուրջ 3,8 անգամ:

Ինչ վերաբերում է ՀՀ բանկերի կողմից ԱՐՔԱ-ՄԻՐ քարտերի թողարկմանը, ապա դրանց ծավալը 2022-ին ևս զգալի աճ է գրանցել: Այսպես, 2022թ. երրորդ եռամսյակում շրջանառության մեջ գտնվող ԱՐՔԱ-ՄԻՐ քարտերի քանակը կազմել է 11,7 հազար, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակը գերազանցել է 68%-ով: 2022-ի երկրորդ եռամսյակի դրությամբ աճի ցուցանիշը կազմել է 48%, իսկ առաջին եռամսյակի տվյալներով՝ ընդամենը 13% (գծ. 1.19):



Գծապատկեր 1.19. ՀՀ բանկերի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող ԱՐՔԱ-ՄԻՐ քարտերի քանակը, ըստ եռամսյակների[22]

21 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):

22 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):

ՀՀ բանկերի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող քարտերով ՀՀ տարածքում կատարված գործարքների քանակը 2022թ. երրորդ եռամսյակում կազմել է 42 մլն կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ գործարքների քանակն աճել է մոտ 40 տոկոսով: 2022-ի առաջին երկու եռամսյակներում ևս արձանագրվել են աճի նմանօրինակ տեմպեր (համապատասխանաբար՝ 36 և 42%%):

ՀՀ տարածքում գործարքների ընդհանուր ծավալը 2022-ի երրորդ եռամսյակում գերազանցել է 1 տրլն դրամը, ինչը նախորդ տարվա նույն եռամսյակի մակարդակը գերազանցում է 31%-ով: Գործարքների ծավալի ամենամեծ աճը Վիզա քարտերով է՝ 38%՝ երրորդ եռամսյակում, 34%՝ երկրորդում և 29%՝ առաջինում: ԱՐՔԱ քարտերով ևս երրորդ եռամսյակում գործարքների ծավալի աճը գերազանցել է 30 տոկոսը (գծ. 1.20):



Գծ. 1.20. ՀՀ բանկերի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերով ՀՀ-ում կատարված գործարքների ծավալը, մլն դրամ[23]

ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով արտասահմանում կատարված գործարքների ծավալը 2022թ. երրորդ եռամսյակում կազմել է 133 մլրդ դրամ, ինչը 2021թ. երրորդ եռամսյակի մակարդակը գերազանցում է 2,2 անգամ: 2022-ի երկրորդ եռամսյակում գործարքների ծավալի աճն էլ ավելի մեծ է եղել՝ 2,7 անգամ:

Արտասահմանում գործարքների ամենամեծ ծավալը բաժին է ընկնում ՎԻԶԱ քարտերին, որոնցով կատարված գործարքների ծավալը 2022թ. երրորդ եռամսյակում աճել է 2,5 անգամ, իսկ երկրորդ եռամսյակում (2021-ի նույն եռամսյակի համեմատությամբ) աճը կազմել է 3,0 անգամ (գծ. 1.21):



Գծ. 1.21. ՀՀ բանկերի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերով արտասահմանում կատարված գործարքների ծավալը, մլն դրամ[24]

23 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):

24 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):

Մաստեր քարտերով գործարքների ծավալի աճը, ըստ եռամսյակների, կազմել է 68-120 տոկոս: Բազմապատիկ աճ է գրանցվել նաև ԱՐՔԱ (ԱՐՔԱ-ՄԻՐ) քարտերով արտասահմանում կատարված գործարքների քանակի և ծավալի պարագայում: Այսպես, 2022թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում գործարքների թվի աճը կազմել է համապատասխանաբար 72 և 77 անգամ, իսկ ծավալը՝ 110 և 82 անգամ:



Գծապատկեր 1.22. Արտասահմանում թողարկված ՄԻՐ քարտերով ՀՀ տարածքում կատարված գործարքների ծավալը, մլն դրամ[25]

Արտասահմանում թողարկված ՄԻՐ քարտերով ՀՀ տարածքում 2022թ. երրորդ եռամսյակում կատարվել է 2,3 մլն գործարք՝ շուրջ 45 մլրդ դրամ ծավալով: Նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, գործարքների քանակը տասնապատկվել է, իսկ ծավալը աճել է 16 անգամ: 2022-ի երկրորդ եռամսյակում դիտարկվող աճերը ևս տպավորիչ են՝ համապատասխանաբար 10 և 13 անգամ (գծ. 1.22):

25 Տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):

2. Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության արտաքին հատվածի վրա. արտահանում և ներմուծում (հեղ.՝ Աստղիկ Խաչատրյան)

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը, հանգեցնելով համաշխարհային տնտեսությունում արժեշղթաների խաթարման և հումքի ու էներգակիրների գների էական բարձրացման՝ այդպիսով նպաստելով համաշխարհային շուկայում արդեն իսկ առկա գնաճային միտումներին և էական հարված հասցնելով կորոնավիրուսային համավարակից հետո տնտեսությունների վերականգնման տեմպերին, մեծապես ազդել է նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա՝ պայմանավորված արտաքին շուկաների ու հատկապես ռուսական շուկայի հետ ՀՀ տնտեսության սերտ փոխազդեցությամբ: ՀՀ-ն ՌԴ հետ պատմականորեն ձևավորել է բազմաշերտ համագործակցային հարաբերություններ, որոնց համատեքստում տնտեսական հարաբերությունները ենթադրում են արտաքին առևտրի, դրամական փոխանցումների, օտարերկրյա ներդրումների և տուրիզմի մասով առկա կապերին26: Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ՀՀ տնտեսության վրա ունեցած ազդեցության մասին են փաստում միջազգային առաջավոր կազմակերպությունների և ինստիտուտների կողմից կոնֆլիկտի էսկալացիայից հետո ՀՀ տնտեսական աճի մասին կանխատեսումների կտրուկ փոփոխությունը: Այսպես, Արժույթի միջազգային հիմնադրամը (այսուհետ՝ ԱՄՀ), 2022 թվականի ապրիլին հրապարակված զեկույցի համաձայն, էականորեն նվազեցրել էր ՀՀ տնտեսական աճի կանխատեսումը՝ սահմանելով այն 1.5% 2021 թվականի հոկտեմբերի 4.5% կանխատեսման փոխարեն[27][28]:

Այնուամենայնիվ, ԱՄՀ-ն այնուհետև վերանայել է 2022 թվականի համար ՀՀ տնտեսական աճի իր կանխատեսումը՝ վերջինս սահմանելով մոտ 5.0% հունիսին[29] և վերանայելով այն 7.0% հոկտեմբերին[30]՝ հիմնվելով ՀՀ տնտեսական կատարողականի ցուցանիշների վրա: Այսինքն՝ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության համատեքստում դիտարկելով՝ հնարավոր է փաստել, որ վերջինիս համար այն ենթադրում է ինչպես որոշակի ռիսկեր, այնպես էլ հնարավորություններ, որոնց արդյունավետ իրացումը կարող է նպաստել ՀՀ տնտեսության աճին: Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի՝ որպես ՀՀ տնտեսության վրա ներազդող արտաքին գործոնի, համատեքստում հետաքրքրական է ուսումնասիրել վերջինիս ազդեցությունը տնտեսության արտաքին հատվածի՝ արտահանման և ներմուծման վրա:

Անկախության ձեռքբերումից ի վեր ՀՀ տնտեսությունը ենթարկվել է բազմաթիվ վերափոխումների՝ աստիճանական անցում կատարելով պլանային տնտեսությունից շուկայականի և հաղթահարելով Խորհրդային միության փլուզումից առաջացած տնտեսական դժվարությունները՝ արձանագրել է տնտեսական կատարողականի բավականին լավ

26 Հերգնյան, Ս., 2022, 1.3% աճից 3% անկում. ռուս-ուկրաինական պատերազմի հնարավոր ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, Հետք: Հասանելի է այստեղ՝ https://hetq.am/hy/article/143564

27 International Monetary Fund October 2021. World Economic Outlook. Recovery During a Pandemic: Health Concerns, Supply Disruptions, and Price Pressures, p. 116.

28 International Monetary Fund April 2022. World Economic Outlook. War Sets Back the Global Recovery, p. 142.

29 PRESS RELEASE NO. 22/231 June 2022. IMF Staff Concludes Staff Visit to the Republic of Armenia. Available at https://www.imf.org/en/News/Articles/2022/06/27/pr22231-armenia-imf-staff-concludes-staff-visit-to-the-republic-of-armenia

30 International Monetary Fund October 2022. World Economic Outlook. Countering the Cost-of-Living Crisis, p. 130.

ցուցանիշներ, գրանցելով մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ աճ և ներկայումս բնութագրվելով որպես բարձր միջին եկամուտ ունեցող երկիր (upper middle income country)[31]: Շուկայական տնտեսության վերափոխման համատեքստում տնտեսական աճ ու զարգացում ապահովելու գործընթացում մեծ դերակատարում է ունեցել տնտեսության արտաքին հատվածը՝ պայմանավորված անկախացումից ի վեր աշխարհի տարբեր երկրների հետ ՀՀ ձևավորած առևտրային հարաբերություններով և համագործակցային կապերով:

Ներքին սպառման փոքր շուկայի ու բնական միջոցների սակավ պաշարների համատեքստում ՀՀ տնտեսության համար մեծ նշանակություն ունի տնտեսության արտաքին հատվածը՝ արտահանումը և ներմուծումը՝ որպես դեպի երկիր ֆինանսական հոսքերի մեծացման, արտադրության համար անհրաժեշտ միջոցների ներգրավման ու արտադրական կարողությունների ընդլայնման նպատակով նորագույն տեխնոլոգիաների ձեռքբերման կարևորագույն աղբյուր: Արտահանումն, իր հերթին, ներքին սպառման փոքր շուկայի պայմաններում արտաքին շուկաներին ինտեգրվելու հնարավորություններ ընձեռելով[32], նպաստում է նաև երկրի արտարժութային եկամուտների ապահովմանը, քանի որ արտահանողները՝ արտաքին շուկաներում իրացված ապրանքի դիմաց ստանալով արտարժույթ, ներքին շուկայում փոխարկում են վերջինս դրամով՝ երկրում ձևավորելով արտարժույթի պաշար, ինչը կարևորվում է տարաբնույթ առանցքային նպատակների ու գերակայությունների իրականացման տեսանկյունից, ինչպիսիք արտաքին պարտքի սպասարկումը, ֆինանսական համակարգի և տնտեսության արտաքին կայունության ապահովումն են[33]:

ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքում ներմուծման ծավալները մշտապես գերազանցել են արտահանման ծավալները՝ պայմանավորված իրական փոխարժեքի արժևորմամբ, որի արդյունքում ՀՀ-ում արտադրված պրոդուկտները (ապրանքներն ու ծառայությունները) դառնում են առավել թանկ, և որի պատճառով նվազում են արտահանման ու աճում ներմուծման ծավալները[34]: Նշվածը պայմանավորված է նաև «արտաքին շուկայի որակական ու քանակական պահանջներին բավարարող մրցունակ ապրանքների պակասով, արտահանման խթանման, արտադրության և շուկաների բազմազանեցման արդյունավետ քաղաքականության բացակայությամբ»[35]: Միջազգային առևտրին Հայաստանի մասնակցությունը, հատկապես փոքր է եղել վերջին տարիներին, արտահանման աճի տեմպը՝ տնտեսական աճի համեմատ, եղել է ավելի դանդաղ, իսկ ներմուծման մասով գրանցվել է արտահանման նկատմամբ առաջանցիկ աճ՝ հանգեցնելով ՀՀ արտաքին առևտրային հաշվեկշռի բացասական հաշվեմնացորդի մեծացմանը: Նշված զարգացումների պատճառ են համաշխարհային շուկայում ՀՀ ունեցած ցածր գրավչությունը, տրանսպորտային հաղորդակցման և կապուղիների բացակայությունն ու խոչընդոտները, տնտեսության փոքր ծավալը, արտահանման խթանման ծրագրերի ցածր

31 The World Bank 2022. Armenia. Overview. Available at https://www.worldbank.org/en/country/armenia/overview

32 United Nations Conference on Trade and Development 2005. Determinants of Export Performance, p. 49. https://unctad.org/system/files/official-document/ditctab20051ch2_en.pdf

33 Լույս, 2019, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի միտումներն ու զարգացումները, էջ 1:

34 Լույս, 2019, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի միտումներն ու զարգացումները, էջ 2, 5-6:

35 Ավետիսյան, Ս., Ավետիսյան, Ա., 2015, Գյուղատնտեսական արտադրանքների արտահանման աճի և բազմազանեցման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, էջ 5-6: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/II_Baj._tarmacvac.pdf

արդյունավետությունը և այլն[36]:



Գծապատկեր 2.1. ՀՀ-ում ապրանքների արտահանման և ներմուծման ծավալներն ու տարեկան աճը[37] (մլն. ԱՄՆ դոլար)

Պետք է նկատել, որ արտահանումն ու ներմուծումը ներառում են ոչ միայն տարաբնույթ ապրանքների, այլև ծառայությունների առևտուրը: Ծառայությունների արտահանման ու ներմուծման ծավալները, հատկապես վերջին տարիներին համաշխարհային առևտրի կառուցվածքում աճումն՝ պայմանավորված տարաբնույթ գործոններով, որոնց ցիցամենաէականը տեխնոլոգիական զարգացումն է, որը հնարավորություն է տալիս ծառայություններ մատուցել մեծ տարածությունների վրա՝ նվազեցնելով գործառնական և լոգիստիկ ծախսերը[38]: Պետք է նկատել, որ ՀՀ-ում ծառայությունների կշիռն առավել մեծ է արտահանման կառուցվածքում, որը, սակայն, տարեցտարի նվազում է՝ չնայած դրա առավել բարձր շահութաբերությանը[39]:

36 Այվազյան, S. 2017. ՀՀ արտահանման խթանման հնարավորությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում, Այլընտրանք գիտական հանդես, էջ 138:
Հասանելի է այստեղ՝ http://alternative.am/wp-content/uploads/2017/07/%D5%8F%D5%AB%D5%A3%D6%80%D5%A1%D5%B6-%D4%B1%D5%85%D5%8E%D4%B1%D4%B6%D5%85%D4%B1%D5%86-%D5%80%D5%80-%D5%A1%D6%80%D5%BF%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%AD%D5%A9%D5%A1%D5%B6%D5%B4%D5%A1%D5%B6-%D5%B0%D5%B6%D5%A1%D6%80%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8-%D4%B5%D4%B1%D5%8F%D5%84-%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%B4%D5%A1%D5%AF%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%-D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BF%D5%A5%D6%84%D5%BD%D5%BF%D5%B8%D6%82%D5%B4.pdf

37 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, դիտարկված տարիների հրապարակումներ:

38 Մովսիսյան, Շ., 2019, Ծառայությունների առևտուր. ՀՀ արտաքին տնտեսական գործունեության հեռանկարային սեգմենտը, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն:
Հասանելի է՝ https://asue.am/amberd/publication/analytics/trade-in-services-the-perspective-segment-of-the-ra-foreign-economic-activity

39 Թարփոշյան, Հ. Վ., 2020, Ծառայությունների արտահանման հիմնախնդիրը Հայաստանում, Регион и мир, 2020, № 3, էջ 160:



Գծապատկեր 2.2. ՀՀ արտահանման և ներմուծման կառուցվածքը՝ ըստ վճարային հաշվեկշռի (ապրանքներ ու ծառայություններ)[40]

Թեև 2009-2019 թվականներին ծառայությունները արտահանման կառուցվածքում ունեցել են էական մասնաբաժին, դրանց կշռն աստիճանաբար նվազել է՝ 8.4տ.կ.-ով 2019 թվականին 2009թ.-ի համեմատ՝ թերևս պայմանավորված ապրանքների արտահանման ծավալների ավելի արագ աճով[41]. դիտարկված ժամանակահատվածում ծառայությունների արտահանման ծավալների միջին տարեկան աճը կազմել է 12.0%՝ ապրանքների 15.8%-ի փոխարեն: Ծառայությունների կշիռն արտահանման կառուցվածքում առավել կտրուկ նվազել է վերջին երկու տարիներին կորոնավիրուսային համավարակի ունեցած ազդեցությամբ՝ հիմնականում պայմանավորված տուրիզմի ոլորտի (ճանապարհորդություններ) ծառայությունների արտահանման ծավալների կրճատմամբ, որոնց ծավալները, ունենալով էական կշիռ արտահանվող ծառայությունների կառուցվածքում (60-63% 2017-2019թթ.-ին), էականորեն նվազել են 2020 թվականին՝ 81%-ով՝ նպաստելով արտահանված ծառայությունների ծավալների նվազմանը: Պետք է հավելել, որ, չնայած 2021 թվականին գրանցած աճին (58%), արտահանված ծառայությունների ծավալներն էականորեն զիջում են հակահամաճարակային 2019 թվականի ցուցանիշներին:

Թեև ՀՀ անկախությունից հետո աշխարհի տարբեր երկրների հետ ձևավորվել են առևտրային հարաբերություններ, այնուամենայնիվ, ՌԴ-ն շարունակել է մնալ ՀՀ հիմնական գործընկեր շուկան՝ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման մասով: Թեև ՌԴ-ն արտահանման կառուցվածքում 2000-ական թթ. սկզբին ունեցել է հարաբերականորեն փոքր կշիռ, վերջինիս կշիռը հետագա տարիներին ավելացել է՝ առավել մեծ մասնաբաժնի հասնելով հատկապես 2016թ.-ից հետո՝ թերևս պայմանավորված 2015 թվականից Եվրասիական տնտեսական միությանը ՀՀ անդամակցմամբ:

40 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, ՀՀ վճարային հաշվեկշիռ: Հասանելի է այստեղ՝ https://www.cba.am/storage/am/downloads/stat_data_arm/bop_arm_for sitebpm6_rev.xls

41 Թարփոշյան, Հ. Վ., 2020, Ծառայությունների արտահանման հիմնախնդիրը Հայաստանում, Регион и мир, 2020, № 3, էջ 158:



Գծապատկեր 2.3. ՀՀ արտահանման կառուցվածքը՝ ըստ երկրների (ապրանքներ)[42]

Պետք է փաստել, որ ՀՀ արտահանման կառուցվածքն առավել կենտրոնացած է՝ բնութագրվելով հիմնական գործընկեր շուկաների տարբերակման ցածր մակարդակով: Վերջին հինգ տարվա ընթացքում արտահանման մեջ առավել մեծ մասնաբաժին ունեցող երկրները (7 երկիր), որոնք ներկայացված են գծապատկեր 3-ում, դիտարկված տարիներին միասին կազմել են ընդհանուր շուկայի 70%-ը և ավելին: Դրանցից արտահանման կառուցվածքում ամենամեծ կշիռը ՌԴ-ինն է, որը 2020 թվականին արձանագրելով արտահանման ծավալների նվազում, 2021թ.-ին արդեն գերազանցել է 2019 թվականի մակարդակը: Պետք է նկատել, որ արտահանման մեջ առանձին շուկաներից բավականին մեծ է Չինաստանի կշիռը, որի մասնաբաժինն արտահանման կառուցվածքում դարձել է առավել նշանակալի 2013 թվականից սկսած՝ հասնելով 13%-ի 2021 թվականին և դառնալով արտահանման հիմնական երկրորդ շուկան: Արտահանման կառուցվածքում գրեթե նույնքան մասնաբաժին ունի նաև Շվեյցարիան (12%), որի կշիռը 2021 թվականին, ընդհակառակը, կտրուկ նվազել է 2019-2020թթ. համեմատ՝ 5-6 տ.կ.-ով:

Որպես այդպիսին, ՀՀ արտահանման հիմնական շուկաները ԵՄ երկրները և ՌԴ-ն են, որոնք միասին ապահովում են արտահանման ծավալների կեսը՝ 56% 2018թ., 50% 2019, 44% 2020թ. և 50% 2021 թվականին:



Գծապատկեր 2.4. ԵՄ, ՌԴ և այլ շուկաների մասնաբաժինը ՀՀ արտահանման կառուցվածքում (ապրանքներ)[43]

42 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում ներկայացված տվյալները:
Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին դիտարկված տարիների հրապարակումներ:

43 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում ներկայացված տվյալները:
Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին դիտարկված տարիների հրապարակումներ:

Պետք է նկատել, որ արտահանման կառուցվածքում ՌԴ կշռի շարունակական ավելացմանը զուգահեռ՝ ԵՄ երկրների (ԵՄ-27) մասնաբաժինը վերջին տարիներին շարունակաբար նվազել է՝ հասնելով 22%-ի 2021 թվականին, մինչդեռ 2005-2011 թվականներին ԵՄ երկրները կազմում էին ՀՀ արտահանման ծավալների գրեթե կեսը:

Մյուս կողմից, ներմուծումը, որը ենթադրում է ՀՀ ինչպես վերջնական սպառման այնպես էլ հումքի և կիսապատրաստի նյութերի ներկրումը, թեև արտահանման համեմատությամբ մշտապես ունեցել է գործընկեր շուկաների առավել բազմազանեցված կառուցվածք (2000-2016 թվականներին ներմուծման առաջին 3 երկրները տիրապետել են շուկայի մասնաբաժնի 40%-ից ոչ ավելին), 2017 թվականից սկսած՝ բնորոշվել է կենտրոնացվածության առավել բարձր մակարդակով, իսկ 2021 թվականին ներմուծման հիմնական 3 երկրները (ՌԴ, Չինաստան, Իրան) կազմել են ընդհանուր շուկայի 56%-ը:



Գծապատկեր 2.5. ՀՀ ներմուծման կառուցվածքը՝ ըստ արտահանող երկրների (ապրանքներ)[44]

Պետք է նկատել, որ ներմուծման կառուցվածքի կենտրոնացվածության մակարդակի բարձրացումը հիմնականում պայմանավորված է ՌԴ-ի կշռով, որը 2021 թվականին 2019 թվականի համեմատ մեծացել է 7.4տ.կ.-ով՝ 2019թ.-ի 29.8%-ի փոխարեն 2021 թվականին հասնելով 37.2%: Թուրքիան, որ վերջին 5 տարիների ընթացքում ներմուծման ընդհանուր ծավալներով 5-րդ երկիրն է, և որի կշիռն ընդհանուր կառուցվածքում մինչև 2020 թվականը տատանվել է 3-6%-ի միջակայքում, ներմուծման ընդհանուր կառուցվածքում (ըստ ծագման երկրի) մասնաբաժնի որոշակի նվազում է արձանագրել 2021 թվականին (4տ.կ. 2016-2020թթ. նկատմամբ)՝ թերևս պայմանավորված թուրքական ծագում ունեցող վերջնական սպառման ապրանքների նկատմամբ 2020 թվականին սահմանված արգելքով[45]:

Ներմուծման դեպքում ևս ԵՄ-ն և ՌԴ հանդես են գալիս որպես հիմնական շուկաներ, որոնք դիտարկված ժամանակահատվածում կազմել են ներմուծման ծավալների կեսը: Հատկանշական է, որ 2000-2015 թվականներին ԵՄ երկրները ներմուծման կառուցվածքում ունեցած մասնաբաժնով գերազանցել են Ռուսաստանին, որի կշիռը, շարունակաբար

44 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում ներկայացված տվյալները:
Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին դիտարկված տարիների հրապարակումներ:

45 Հայաստանի Հանրապետության կառավարության 20 հոկտեմբերի 2020 թվականի N 1708-Ն որոշումը Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին: Հասանելի է այստեղ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149696

ավելանալով, 2017 թվականին արդեն հասնել է 31%-ի, ինչին, թերևս, նպաստել է նաև ԵԱՏՄ-ին ՀՀ անդամակցումը:



Գծապատկեր 2.6. ԵՄ, ՌԴ և այլ շուկաների մասնաբաժինը ՀՀ ներմուծման կառուցվածքում՝ ըստ արտահանող երկրի (ապրանքներ)[46]

Արտահանման խթանման ու վերջինիս ծավալների մեծացման տեսանկյունից կարևորվում են երկրի արտադրական հնարավորությունները և արտադրված ապրանքների կառուցվածքը: Համաշխարհային շուկայում մրցունակ լինելու նպատակով անհրաժեշտ է արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք կունենան նորարարական և բարձր ավելացված արժեք՝ սպասարկելու տվյալ ապրանքների մասով առկա ու հավանական (պոտենցիալ) գլոբալ պահանջարկը: Նմանօրինակ ապրանքների թողարկումը, իր հերթին, պայմանավորում է տնտեսության բարդությունը, որը ենթադրում է տնտեսությունում «պարունակվող արտադրողական գիտելիքների քանակի արտացոլումը և դրանց արդյունավետ կիրառությունը՝ կապիտալի նոր համակցությունների ու վերախմբավորումների միջոցով նորարարությունների իրականացումը, այդ հենքով՝ բարդ արտադրանքի թողարկումը»[47]: Տնտեսության բարդությունը «արտահայտվում է երկրի արտադրողական արդյունքի համակազմով և արտացոլում է այն կառուցվածքները, որոնք առաջանում են գիտելիքները պահպանելու ու համադրելու համար»[48]: Տնտեսության բարդության և արտահանման փոխկապակցվածությունն արտահայտվում է այն գաղափարում, որ «տնտեսական բարդության աստիճանն արտացոլվում է երկրի արտահանման կառուցվածքում բարդության բարձր աստիճանի արտադրանքի տեսակարար կշռով»[49]: Տնտեսության բարդության գնահատման նպատակով Հարվարդի համալսարանի կողմից մշակվել է տնտեսության բարդության համաթիվ (Economic Complexity Index), որը

46 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում ներկայացված տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի մասին դիտարկված տարիների հրապարակումներ:

47 Վարդանյան, Դ., Վարդանյան, Մ. 2022, Ներքին խնայողություններով տնտեսության բարդության աստիճանի բարձրացման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման հայեցակարգային շրջանակ, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 1(67), Տնտեսագետ հրատ., Երևան, էջ 11: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/science/banber/2022-year-1/1.1.pdf

48 Hausmann, R., Hidalgo, C. A., Bustos, S., Coscia, M., Chung, S., Jimenez, J., Simoes, A., Yildirim, M. A. 2013. The Atlas of Economic Prosperity: Mapping Paths to Prosperity, p. 18. Available at https://growthlab.cid.harvard.edu/files/growthlab/files/atlas_2013_part1.pdf

49 Վարդանյան, Դ., Վարդանյան, Մ. 2022, Ներքին խնայողություններով տնտեսության բարդության աստիճանի բարձրացման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման հայեցակարգային շրջանակ, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 1(67), Տնտեսագետ հրատ., Երևան, էջ 14: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/science/banber/2022-year-1/1.1.pdf

չափում է երկրի արտադրողական գիտելիքների ներկա վիճակը[50]: Տնտեսության բարդության համաթվով ՀՀ-ն 2020 թվականին պատրաստվածության -0,24 համաթվով զբաղեցրել է 77, իսկ հակահամաճարակային 2019 թվականին՝ -0,23 համաթվով՝ 74-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 2.7. Տնտեսության բարդության համաթիվ. Հայաստան[51]

Տնտեսության բարդության համաթվի ՀՀ ցուցանիշներն ուսումնասիրելու արդյունքում հնարավոր է փաստել, որ ՀՀ տնտեսությունը վերջին 20 տարիների ընթացքում դարձել է առավել պարզունակ՝ գրանցելով շուրջ 40 հորիզոնականի անկում: Նշվածը, թերևս, պայմանավորված է ՀՀ-ում նորարարության ոչ բարձր մակարդակով բնորոշվող, ավելացված ցածր արժեքով և ցածր արտադրողական ապրանքների թողարկմամբ, որոնք բավարար չափով մրցունակ չեն՝ սպասարկելու արտաքին շուկաներում առկա պահանջարկը:

ՀՀ արտահանման և վերջինիս կառուցվածքի հիմնահարցը նոր հրամայական է ստացել արտաքին միջավայրում ընթացող վերջին զարգացումների՝ մասնավորապես Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համատեքստում: 2022 թվականին առաջին ամիսներին, պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի վերականգնմամբ, արձանագրվել է արտաքին ապրանքաշրջանառության երկնիշ աճ[52]. 2021 թվականի նույն ժամանակահատվածի նկատմամբ 2022 թվականի հունվար-փետրվարին արտահանման ծավալներն աճել են 40.0%, իսկ ներմուծման ծավալները՝ 60.2%-ով: Այնուամենայնիվ, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությամբ՝ 2022 թվականի մարտին թե՛ արտահանման, թե՛ ներմուծման աճի

50 Atlas of Economic Complexity, Country & Product Complexity Rankings. Available at https://atlas.cid.harvard.edu/rankings

51 Atlas of Economic Complexity, Country & Product Complexity Rankings. Available at https://atlas.cid.harvard.edu/rankings

52 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները 2022 թվականի առաջին եռամսյակում:

տեմպերը դանդաղել էին՝ ՌԴ շուկայում ընթացող զարգացումներով, վերջինիս նկատմամբ կիրառված պատժամիջոցներով, փոխարժեքի տատանումներով և տնտեսվարողների շրջանում առկա անորոշությամբ:



Գծապատկեր 2.8. Արտահանման և ներմուծման ծավալները (հազ. ԱՄՆ դոլար) և աճը 2022թ.[53]

2022 թվականի մարտից նկատվող աճի տեմպերի դանդաղումը, հատկապես հատկանշական էր արտահանման մասով՝ պայմանավորված Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում ՌԴ շուկայում ընթացող զարգացումներով ու ՌԴ տնտեսական աճի դանդաղմամբ, ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցներով, մատակարարման արժեշղթաների խաթարմամբ, ռուբլու նկատմամբ դրամի արժևորմամբ, ինչպես նաև Թեղուտի հանքավայրի շահագործման ժամանակավոր կասեցմամբ, իսկ դրա՝ 2022 թվականի առաջին եռամսյակում գրանցված 26.9% աճը հիմնականում պայմանավորված է եղել արտաքին պահանջարկի վերականգնմամբ և միջազգային շուկայում մետաղների գների բարձր մակարդակով[54]: Այնուամենայնիվ արտահանման ու ներմուծման ծավալների աճի դանդաղ տեմպերը հետագա ամիսներին վերականգնվել են. հունվար-հոկտեմբերին արտահանման մասով գրանցվել է 71.2%, իսկ ներմուծման մասով՝ 63.5% աճ:

ՀՀ տնտեսության արտաքին հատվածի արտահանման ու ներմուծման վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ունեցած ազդեցության ուսումնասիրության շրջանակում հարկ է նշել ընթացիկ իրավիճակն ուրվագծող հետևյալ երևույթների մասին.

• իրական փոխարժեք, որը մեծ ազդեցություն ունի և կարգավորում է տարբեր երկրների հետ ապրանքափոխանակության համամասնությունը. իրական փոխարժեքը, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում փոխարժեքի տատանումներով պայմանավորված, վատթարացել է ՀՀ մի շարք հիմնական գործընկեր երկրների դեպքում՝ բացառությամբ ՌԴ-ի, որի արդյունքում վերջինիս կշիռն արտահանման կառուցվածքում մեծացել է՝ հասնելով 41.4% հունվար-հոկտեմբերին:

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում փետրվարի վերջին և մարտին գրանցված ռուսական ռուբլու արժեզրկումը բացասաբար է անդրադարձել արտահանման վրա՝ պայմանավորված ՌԴ-ի՝ ՀՀ արտահանման հիմանական գործընկեր

53 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Արտաքին առևտրի տվյալների բազա: https://www.armstat.am/am/?nid=148

54 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները 2022 թվականի առաջին եռամսյակում:

շուկան լինելու փաստով ու դրա արդյունքում ՀՀ արտահանողների մոտ առկա անորոշությամբ: Ռուսական ռուբլու արժեզրկման հիմնական ալիքը, չնայած հակամարտության էսկալացիայի՝ ռուբլու վրա հենց առաջին օրերից ունեցած ազդեցությանը, սկսվեց մարտի 4-ին՝ Արևմուտքի երկրների կողմից ՌԴ նկատմամբ տնտեսական պատժամիջոցների հերթական փաթեթի կիրառման արդյունքում[55]: Դրա համատեքստում ՌԴ ռուբլի/ՀՀ դրամ փոխարժեքը ևս ենթարկվեց տատանումների՝ մարտի 7-ին հասնելով իր պատմական նվազագույն՝ 3.74 դրամի մակարդակին[56]: Ռուսական ռուբլու՝ հետագա ամիսների արժևորումն իր նպաստն է ունեցել արտահանման ծավալների հետագա աճի ապահովման գործընթացում:



Գծապատկեր 2.9. Դրամ/ռուբլի իրական փոխարժեք (2021 դեկտեմբեր=100)[57][58]

Մյուս կողմից, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի արժևորումը խթանել է ներմուծումը՝ հանգեցնելով ներմուծման ծավալների էական աճի:

• ԵԱՏՄ երկրների միջև ազատ ապրանքաշրջանառությունը. Հայաստանը, 2015 թվականի հունվարի 2-ից լինելով ԵԱՏՄ անդամ երկիր[59], Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համատեքստում առերեսվել է արտաքին առևտրի կառավարման նոր մարտահրավերների: Պայմանավորված ռուսական շուկա տարաբնույթ ապրանքների ներմուծման արգելքներով (սանկցիաներով)՝ հնարավորություն է առաջացել ԵԱՏՄ անդամ մյուս երկրները դիտարկելով որպես տարանցիկ երկիր՝ մի շարք ապրանքներ մատակարարել ռուսական շուկա՝ հաշվի առնելով ԵԱՏՄ տարածքում ազատ ապրանքաշրջանառությունը[60]: Նշված ժամանակահատվածում Հայաստանում մի շարք ապրանքների մասով արդեն իսկ գրանցվել է արտահանման ծավալների էական աճ, դրանցից՝ ադամանդե քար՝ 3.9 անգամ, այլ կերպ պահածոյացված պտուղ, ընկույզ, հատապտուղ՝ 4.5 անգամ, ավտոմատ հաշվիչ մեքենաներ, բլոկներ՝ 29.4 անգամ, մարդատար

55 Բեջանյան, Հ., Կարապետյան, Ն. 2022. ՌԴ փոխարժեքի անկայունության և տնտեսական ճգնաժամի ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա, Ամբերդ տեղեկագիր, 2(15), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատ., Երևան: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/amberd/2022-year-2/1.pdf

56 Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Փոխարժեքների արխիվ: https://www.cba.am/AM/SitePages/ExchangeArchive.aspx

57 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ 1. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2022 թվականի հունվար-նոյեմբերին: https://armstat.am/am/?nid=82&id=2534 2. Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, Գներ և սակագներ: https://armstat.am/file/article/sv_10_22a_130.pdf 3. Федеральная служба государственной статистики, Цены, инфляция, Потребительские цены. https://rosstat.gov.ru/statistics/price

58 Աճը նշանակում է դրամի արժևորում:

59 Հայաստանի՝ ԵԱՏՄ մասին պայմանագրին միանալու պայմանագիրը ստորագրվել է 2014 թ. հոկտեմբերի 10-ին, որն ուժի մեջ է մտել 2015 թ.-ի հունվարի 2-ից: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն: https://www.mfa.am/hy/international-organisations/6

60 http://www.eaeunion.org/files/history/2014/2014_2.pdf

ավտոմեքենա՝ 16.0 անգամ, ավտոմեքենայի մասեր՝ 2.3 անգամ, թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր՝ 2.5 անգամ, ձուկ (սառեցրած)՝ 3.6 անգամ, ոսկի անմշակ կամ կիսամշակ, փոշի՝ 3.3 անգամ, սունկ, գետնասունկ և այլն՝ 2.5 անգամ, սուրճ՝ 3.3 անգամ: Հաշվի առնելով վերոնշյալը՝ ստեղծված համատեքստում Հայաստանը պետք է վարի հետևողական քաղաքականություն՝ բազմաթիվ արտաքին գործընկերների հետ ձևավորած առևտրային հարաբերությունները պահպանելու և հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով:

• Գազի անփոփոխ գինը. Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում վառելիքի համաշխարհային գների էական աճի համատեքստում Հայաստանի համար ռուսական գազի գնի անփոփոխ մնալը[61] ենթադրում է, որ տեղական արտադրության ապրանքները գնային առումով դառնում են առավել մրցունակ՝ հաշվի առնելով դրանց ինքնարժեքում ծախսված գազի մասնաբաժինը, որը իր հերթին, նպաստում է Հայաստանից արտահանվող ապրանքների ծավալների մեծացմանը:

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համատեքստում վերոնշյալ երևույթները մեծապես ազդել են նաև արտահանման և ներմուծման կառուցվածքի վրա՝ ըստ հիմնական շուկաների: Ի լրումն դրանց՝ տարաբնույթ կազմակերպությունների ու մատակարարների կողմից ՌԴ շուկայի հետ համագործակցության դադարեցումը ռուսական շուկայում առաջացրել են բազմաթիվ հատույթներ, որոնք ՀՀ արտահանողների համար ենթադրում են նոր հնարավորություններ՝ հանգեցնելով դեպի ՌԴ արտահանման ծավալների մեծացմանը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2022 թվականի հունվար-հոկտեմբերին դեպի ՌԴ արտահանման ծավալներն աճել են 2.5 անգամ, որի արդյունքում ՌԴ մասնաբաժինը ՀՀ արտահանման կառուցվածքում հասել է 41.4%-ի՝ հունվարից ավելանալով 14.3տ.կ.-ով: Հարկ է նշել նաև, որ դեպի ՌԴ արտահանման ծավալները, ըստ տարբեր հեղինակների, կարող են ներառել նաև վերաարտահանվող ապրանքներ[62]:



Գծապատկեր 2.10. Արտահանման կառուցվածքը՝ ըստ հիմնական շուկաների (2022թ. հունվար-հոկտեմբեր)[63]

61 Աղբյուրը՝ https://www.panarmenian.net/arm/news/297529/

62 Mejlumyan, A. 2022. Armenian trade with Russia Raises Questions about Re-exports. Eurasianet. Available at https://eurasianet.org/armenian-trade-with-russia-raises-questions-about-re-exports

63 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, 4.1.1. Արտաքին և փոխադարձ առևտուր, Հրապարակում: https://www.armstat.am/am/?nid=82&id=2533

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում ՌԴ մասնաբաժնի՝ ՀՀ արտահանման կառուցվածքում աճին ի հակակշիռ, 2022 թվականի դիտարկված հատկապես վերջին ամիսներին էականորեն նվազել է ԵՄ երկրների կշիռը՝ հասնելով 16.2% հոկտեմբերին: Չինաստանն ու Շվեյցարիան, ՀՀ արտահանման կառուցվածքում նույնպես ունենալով էական կշիռ, ևս արձանագրել են մասնաբաժնի նվազում: Հատկանշական է, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում ՀՀ արտահանման համար հնարավորություններ են առաջացել ոչ միայն ՌԴ, այլև տարաբնույթ այլ շուկաներում: Օրինակ՝ դիտարկված ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատ, 6.7 անգամ աճել են դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանման ծավալները, որի արդյունքում վերջինիս կշիռը ՀՀ արտահանման կառուցվածքում հունվարի 1.3%-ի փոխարեն հունվար-հոկտեմբերին հասել է 10.1%-ի (8.8տ.կ-ով)՝ գերազանցելով Չինաստանին և Շվեյցարիային: Նույն ժամանակահատվածում էականորեն աճել են նաև դեպի այլ երկրներ, օրինակ՝ դեպի Բելառուս և դեպի Վրաստան արտահանման ծավալները՝ համապատասխանաբար 2.8 և 2.4 անգամ:

Այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ նշյալ փոփոխությունների համատեքստում ՀՀ արտահանման կառուցվածքը՝ ըստ հիմնական գործընկեր երկրների, դարձել է առավել կենտրոնացած, որի գնահատման համար դիտարկվել է նաև Հերֆինդալ-Հիրշման ինդեքսը (HHI) (գծապատկեր 2.11), որը հնարավորություն է տալիս գնահատել շուկայի կենտրոնացվածությունը. ըստ ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի՝1500-2500 ընկած HHI շուկաները բնութագրվում են որպես չափավոր կենտրոնացած, իսկ 2500-ից բարձր HHI-ով բնորոշվող շուկաները՝ խիստ կենտրոնացած[64]: Ինչպես կարելի է նկատել ստորև ներկայացված գծապատկերից, նշված ցուցանիշը 2022 թվականի հունվարի նկատմամբ զգալիորեն աճել է, և չնայած սեպտեմբերի նկատմամբ հոկտեմբերին արձանագրված որոշակի նվազմանը, ՀՀ արտահանման շուկան բնութագրվում է որպես խիստ կենտրոնացած (HHI-ը հոկտեմբերին՝ 2902):



Գծապատկեր 2.11. Հերֆինդալ-Հիրշման ինդեքս. Հայաստան[65]

Պետք է նկատել, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում 2022 թվականի հունվարից սկսած՝ ՀՀ ներմուծման կառուցվածքում որոշակիորեն մեծացել է այլ երկրների մասնաբաժինը՝ 3.7 տ.կ.-ով՝ փաստելով ներմուծման շուկաների բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) առավել բարձր մակարդակի մասին:

64 The United States Department of Justice. https://www.justice.gov/atr/herfindahl-hirschman-index

65 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հաշվարկի համար օգտագործելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Արտաքին առևտրի տվյալների բազա: https://armstat.am/am/?nid=160



Գծապատկեր 2.12. Ներմուծման կառուցվածքը՝ ըստ հիմնական շուկաների (ըստ արտահանող երկրի, 2022թ. հունվար-հոկտեմբեր)[66]

ՌԴ-ն, ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման դեպքում լինելով ՀՀ հիմնական շուկան, 2022 թվականի հունվարից արձանագրել է ներմուծման կառուցվածքում մասնաբաժնի որոշակի նվազում՝ 6.5տ.կ-ով՝ հասնելով 33.8%-ի հունվար-հոկտեմբերին: Հատկանշական է, որ նշված ժամանակահատվածում որոշակիորեն մեծացել է ԵՄ երկրների մասնաբաժինը՝ 3.4տ.կ-ով՝ թերևս պայմանավորված ՌԴ համեմատ ներմուծման ծավալների ավելի մեծ աճով՝ 64.7% ՌԴ-ից ներմուծման 48.2% աճի փոխարեն՝ հավանաբար պայմանավորված եվրոյի նկատմամբ դրամի արժևորմամբ: 2022 թվականի հունվարի համեմատ՝ ներմուծման կառուցվածքում (ըստ արտահանող երկրի) որոշակիորեն մեծացել է Վրաստանի մասնաբաժինը (1տ.կ.-ով)՝ թերևս փաստելով ցամաքային ճանապարհով ապրանքաշրջանառության ծավալների մեծացման մասին, ինչը բացատրվում է նույն ժամանակահատվածում ըստ ծագման երկրի ներմուծման կառուցվածքում վերջինիս ավելի փոքր մասնաբաժնով (1.8% հունվար-հոկտեմբերին): 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, ըստ ծագման երկրի, 2.0 անգամ մեծացել են Բելառուսից, 2.2 անգամ Իսպանիայից, 2.9 անգամ ԱՄՆ-ից, 2.0 անգամ Կորեայի Հանրապետությունից, 3.0 անգամ Ճապոնիայից, 3.3 անգամ Հունաստանից, 2.3 անգամ Բրազիլիայից և 2.1 անգամ Միացյալ Թագավորությունից ներմուծման ծավալները:

Պետք է նկատել, որ նշված ժամանակահատվածում արտահանման կառուցվածքը փոփոխության է ենթարկվել թե՛ ըստ հիմնական գործընկեր երկրների, թե՛ ըստ ապրանքների: Այսպես, 2022 թվականի հունվար-հոկտեմբերին՝ 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, արտահանման կառուցվածքում զգալիորեն մեծացել է այլ ապրանքատեսակների մասնաբաժինը (14.4տ.կ-ով)՝ պայմանավորված որոշ ապրանքատեսակների մասով գրանցված արտահանման ծավալների էական աճով:

66 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, 4.1.1. Արտաքին և փոխադարձ առևտուր, Հրապարակում: https://www.armstat.am/am/?nid=82&id=2533



Գծապատկեր 2.13. Արտահանման կառուցվածքը՝ ըստ ապրանքների[67]

Նշված ժամանակահատվածում, ըստ ապրանքատեսակների, արտահանման կառուցվածքում զգալիորեն մեծացել է «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (10տ.կ.-ով) ու «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, մետաղներ, դրանցից իրեր» (9տ.կ.-ով) ապրանքների մասնաբաժինը՝ պայմանավորված դրանց արտահանման ծավալների էական աճով՝ 89.5% ու 2.6 անգամ համապատասխանաբար: Մյուս կողմից, հանքահումքային արտադրանքը, որ արտահանման կառուցվածքում մշտապես ունեցել է զգալի մասնաբաժին (33% 2021թ.-ի հունվար-հոկտեմբերին), դիտարկված ժամանակահատվածում արձանագրել է մասնաբաժնի նվազում՝ 12.6 տ.կ.-ով՝ թերևս պայմանավորված պղնձի հանքաքարի արտահանման ծավալների նվազմամբ: Պղնձի հանքաքարը, որ մշտապես էական մասնաբաժին է ունեցել ՀՀ արտահանման կառուցվածքում, 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, արձանագրել է արտահանման ծավալների նվազում՝ ինչպես անվանային դոլարային, այնպես էլ իրական ծավալների՝ -12% և -6% համապատասխանաբար: Հարկ է նկատել, որ պղնձի հանքաքարի անվանական դոլարային և իրական ծավալների նվազման ցուցանիշների տարբերությունը պայմանավորված է վերջինիս գների նվազմամբ (-6.4%): Թեև համաշխարհային շուկայում պղնձի գները 2022 թվականի առաջին եռամսյակում էականորեն աճել են՝ 18%[68], որը, ըստ տարբեր աղբյուրների[69][70], բացատրվում է պղնձի նվազ պաշարներով, պղնձի առաջարկի կրճատմամբ, Չինաստանի պահանջարկով և Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով, ապրիլ-հուլիս ամիսներին վերջինիս

67 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-հոկտեմբերին, 4.1.1. Արտաքին և փոխադարձ առևտուր, Հրապարակում : https://www.armstat.am/am/?nid=82&id=2533

68 IndexMundi https://www.indexmundi.com/commodities/?commodity=copper&months=120&currency=eur

69 https://www.rough-polished.com/en/analytics/127465.html

70 Barrera, P. 2022 April 25, Copper Price Update: Q1 2022 in Review. https://investingnews.com/copper-price-update-q1-2022/

գները նվազել են (-2% երկրորդ եռամսյակում)[71], ինչը, համաձայն տարաբնույթ աղբյուրների[72][73], պայմանավորված է Չինաստանում կորոնավիրուսային համավարակի նոր ալիքով, դրա հետ կապված կարանտինով, տնտեսության վերականգնման ավելի դանդաղ տեմպով ու գնաճի զսպմանը միտված ավելի խիստ դրամավարկային քաղաքականությամբ:

Հատկանշական է, որ արտահանման իրական ծավալային աճը զգալիորեն զիջում է վերջինիս անվանական դոլարային աճին: Այսպես, 2022 թվականի մարտ-ապրիլ ամիսներին արտահանման իրական ծավալների մասով գրանցվել է զգալի անկում՝ 27% մարտին և 19% ապրիլին, և այս ամիսներին գրանցված ծավալների աճն ապահովվել է հիմնականում գների աճի շնորհիվ՝ 44% մարտին ու 51% ապրիլին:



Գծապատկեր 2.14. Անվանական դոլարային և իրական ծավալային աճ. արտահանում[74]

Թեև արտահանման իրական ծավալների մասով հունիսից արդեն արձանագրվել է որոշակի աճ, անվանական դոլարային արտահայտությամբ արտահանման ծավալների աճն էականորեն գերազանցել է իրական ծավալների աճի տեմպերը՝ պայմանավորված գների հետագա առաջանցիկ աճով՝ 62.3% հունվար-հոկտեմբերին: Պետք է նկատել, որ ներմուծման դեպքում ևս գների էական բարձրացումը հանգեցրել է անվանական դոլարային աճի բարձր տեմպերի՝ 2022 թվականի հունվար-հոկտեմբերին ներմուծման անվանական դոլարային աճը կազմել է 63.5%՝ իրական ծավալային աճի 23%-ի փոխարեն:

71 IndexMundi https://www.indexmundi.com/commodities/?commodity=copper&months=120&currency=eur

72 https://www.rough-polished.com/en/analytics/127465.html

73 The Guardian, Copper Price at Lowest Level Since 2020 as Fears over Global Economy Grow. https://www.theguardian.com/business/2022/jul/15/copper-price-at-lowest-level-since-2020-as-fears-over-global-economy-grow-inflation

74 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Արտաքին առևտրի տվյալների բազա: https://armstat.am/am/?nid=148



Գծապատկեր 2.15. Անվանական դոլարային և իրական ծավալային աճ. ներմուծում[75]

Ռուս-ուկրաինական հակամարտության էսկալացիայով պայմանավորված՝ տարբեր աղբյուրների կողմից իրականացվել են հետազոտություններ՝ փորձելով գնահատել կոնֆլիկտի ազդեցությունը տարաբնույթ երկրների և դրանց տնտեսությունների վրա: Հետաքրքրական են հատկապես տարածաշրջանային՝ ՌԴ հետ ձևավորված տնտեսական ու քաղաքական որոշակի հարաբերություններ ունեցող երկրների տնտեսությունների ուսումնասիրությունները Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համատեքստում: Այսպես, Ն.Սեքրիերուն (Secrieru), հղում կատարելով այլ աղբյուրներին, նշում է, որ տարածաշրջանային երկրներից Վրաստանի և Ադրբեջանի՝ դեպի ՌԴ արտահանման ծավալները նվազել են, որին ի հակառակ՝ աճել են ներմուծման ծավալները՝ Վրաստանի դեպքում նավթամթերքի ու ածուխի, իսկ Ադրբեջանի դեպքում՝ հացահատիկի մասով: Ըստ հեղինակի գնահատման՝ հացահատիկի համաշխարհային գների աճի պարագայում Ադրբեջանը փորձ է անում կուտակել հացահատիկի մեծ պաշարներ, ինչի մասին է փաստում նաև Ղազախստանից հացահատիկի ներմուծման ծավալների աճը: Հեղինակի համոզմամբ՝ Ադրբեջանն այդպիսով փորձում է թուլացնել ՌԴ շուկայից գյուղատնտեսական ապրանքների մասով իր կախվածությունը[76]:

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված՝ բացի ապրանքների արտահանումից, նոր հնարավորություններ են առաջացել նաև ծառայությունների արտահանման մասով: Ծառայությունների արտահանումը ենթադրում է «որևէ երկրի ռեզիդենտի կողմից մեկ այլ երկրի բնակիչներին կամ կազմակերպություններին տրամադրված ծառայությունը[77]» կամ «այնպիսի ծառայությունների գործարքներ, որ ռեզիդենտներից տրամադրվում են ոչ ռեզիդենտներին»[78]:

75 Գծապատկերը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Արտաքին առևտրի տվյալների բազա: https://armstat.am/am/?nid=148

76 Secrieru, S. 2022. How Big Is the Storm? Assessing the Impact of the Russian–Ukrainian War on the Eastern Neighbourhood. European Union Institute for Security Studies, p. 4. Available at https://www.iss.europa.eu/sites/default/files/EUISSFiles/Brief_10_Impact%20of%20Russian-Ukraine%20war%20on%20the%20Eastern%20Neighbourhood_web.pdf

77 Nagel, D. 2016. What Are Service Exports, and Why Are They Suddenly So Important? Available at https://www.tradeready.ca/2016/trade-takeaways/service-exports-suddenly-important/

78 Աղբյուրը՝ https://www.insee.fr/en/metadonnees/definition/c1425

Աղյուսակ 2.1. Սահմանահատումներն ըստ քաղաքացիության երկրի, մուտքի և ելքի, 2022 թ. հունվար-սեպտեմբեր[79]

		ՌԴ	Ուկրաինա	Բելառուս
1-ին եռամսյակ	Մուտք	142 117	5 938	5 051
	Ելք	138 111	5 631	4 417
	Սալդո	4 006	307	634
2-րդ եռամսյակ	Մուտք	229 969	6 510	5 337
	Ելք	193 197	6 457	5 546
	Սալդո	36 772	53	-209
3-րդ եռամսյակ	Մուտք	414 598	8 863	6 750
	Ելք	413 200	9 039	6 817
	Սալդո	1 398	-176	-67
Ընդամենը	Մուտք	786 684	21 311	17 138
	Ելք	744 508	21 127	16 780
	Սալդո	42 176	184	358

2022 թվականի հունվար-հոկտեմբերին հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավված երկրներից՝ ՌԴ-ից, Ուկրաինայից և Բելառուսից ՀՀ են ժամանել նշված երկրների քաղաքացիություն ունեցող 959.343 մարդ, որոնց գերակշիռ մեծամասնությունը՝ 95%-ը, ՌԴ քաղաքացիներ են (Ուկրաինայի քաղաքացիները՝ 3%, Բելառուսի քաղաքացիները՝ 2%): Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում հակամարտության մեջ անմիջականորեն ներգրավված երկրներից դեպի ՀՀ մարդկանց մեծ հոսքը երկրում ստեղծում է ծառայությունների մեծ պահանջարկ՝ նոր հնարավորություններ ստեղծելով ծառայությունների արտահանման մասով:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը, պայմանավորված ՌԴ հետ ՀՀ ունեցած բազմաշերտ կապերով, ՀՀ տնտեսության արտաքին հատվածի վրա ունի էական նշանակություն: 2021 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ հունվար-հոկտեմբերին ՀՀ-ում արտահանման ծավալներն աճել են 71.2%, իսկ ներմուծման ծավալները՝ 63.5%-ով: Պայմանավորված ՌԴ շուկայում տարաբնույթ մատակարարների համագործակցության դադարեցմամբ՝ ՌԴ շուկայում առաջացել են բազմաթիվ հատույթներ, որոնց հաշվին էապես աճել են դեպի ՌԴ արտահանման ծավալները՝ 2.5 անգամ հունվար-հոկտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որի արդյունքում ՌԴ մասնաբաժինն արտահանման կառուցվածքում ավելացել է՝ հասնելով 41.4%-ի: Մյուս կողմից, ներմուծման կառուցվածքում որոշակիորեն մեծացել է այլ երկրների մասնաբաժինը՝ հանգեցնելով ներմուծման շուկաների առավել բարձր մակարդակի բազմազանեցման՝ թերևս պայմանավորված արտարժույթի՝ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի արժևորմամբ: Պետք է նկատել նաև, որ ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման մասով գների աճը նույնպես նպաստել է դրանց ծավալների աճին. դիտարկված ժամանակահատվածում ինչպես արտահանման, այնպես էլ ներմուծման իրական ծավալային աճը զիջել է անվանական դոլարային աճին: Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համատեքստում ՀՀ տնտեսության արտաքին հատվածի վերլուծության վրա հիմնվելով՝ կարելի է փաստել, որ հակամարտությունը վերջինիս համար ենթադրում է ինչպես որոշակի ռիսկեր, այնպես էլ

79 Աղյուսակը պատրաստվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով նշված աղբյուրում առկա տվյալները: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2022 թվականի հունվար-սեպտեմբերին, Հրապարակում, էջ 262, Հավելված 2: Հասանելի է այստեղ՝ https://www.armstat.am/file/article/sv_09_22a_6200.pdf

հնարավորություններ, դրանցից՝

- ռիսկեր
- փոխարժեքի հետագա տատանումներ՝ պայմանավորված վառելիքի ներմուծման մասով Արևմուտքի երկրների կողմից ՌԴ նկատմամբ կիրառված մի շարք պատժամիջոցներով80,
- արտահանման շուկաների բարձր կենտրոնացվածություն՝ պայմանավորված արտահանման կառուցվածքում ՌԴ մասնաբաժնի աճով,
- ՀՀ տնտեսության բարդության համաթվի հետագա վատթարացում.
- ԵԱՏՄ տարածքում ազատ ապրանքաշրջանառությամբ և ռուսական շուկա մի շարք ապրանքներ ներմուծելու արգելքներով պայմանավորված՝ ՀՀ-ում արտաքին առևտրի կառավարման ռիսկեր.
- հնարավորություններ
- տարաբնույթ մատակարարների՝ ՌԴ շուկայում գործունեության դադարեցմամբ պայմանավորված՝ շուկայական նոր հատույթների առաջացում, ՀՀ արտադրողների համար արտահանման նոր հնարավորություններ և արտահանման ծավալների աճ,
- պայմանավորված ՌԴ տարբեր արտադրողների հետ ունեցած համագործակցության դադարեցմամբ՝ ՀՀ արտադրողների համար այլ երկրներում առաջացած նիշային շուկաներ արտահանելու հնարավորություններ,
- այլ երկրներում առաջացած նիշային շուկաներ արտահանելու հնարավորությունների իրացման պայմաններում ՀՀ արտահանման շուկաների բազմազանեցման հնարավորություն,
- գազի անփոփոխ գներով պայմանավորված՝ ՀՀ-ում արտադրված ապրանքների գնային մրցունակություն այլ երկրների համեմատ,
- ծառայությունների արտահանման ծավալների աճի հնարավորություններ՝ պայմանավորված դեպի ՀՀ ՌԴ քաղաքացիների մեծ հոսքով:

Հաշվի առնելով վերոնշյալ ռիսկերն ու հնարավորությունները՝ ՀՀ կառավարությունը կարիք ունի արտաքին առևտրի մասով մշակել և իրականացնել ապացույցների վրա հիմնված (evidence-based policy) քաղաքականություն՝ լիարժեք իրացնելու առաջացած հնարավորություններն ու արդյունավետորեն հասցեագրելու հնարավոր ռիսկերը:

80 Աղբյուրը՝ BBC News, 30 September, 2022, What Are the Sanctions on Russia and Are They Hurting Its Economy? Available at https://www.bbc.com/news/world-europe-60125659

3. Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ազդեցությունը ՀՀ տնտեսության իրական հատվածի վրա (հեղ.՝ Անուշ Շիրինյան)

Գլոբալ տնտեսական զարգացումները՝ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համապատկերում

Գլոբալ տնտեսական զարգացման տեմպերի վերաբերյալ կանխատեսումները վերանայվել են նվազման ուղղությամբ: Այսպես, Համաշխարհային բանկը 2023թ. գլոբալ աճը կանխատեսում է 1,7%-ի չափով, ինչը վերջին երեք տասնամյակների ընթացքում տնտեսական աճի երրորդ ամենացածր մակարդակն է: Նախորդ կանխատեսումը, որն արվել է 2022թ. հունիսին, չնայած համավարակով պայմանավորված ճգնաժամային երևույթների պահպանմանը, ամբողջական առաջարկի և պահանջարկի ոչ լրիվ վերականգնմանը, այնուհանդերձ ավելի բարձր էր՝ 3,0%: Նոր կանխատեսումը, որն արվել է 2023թ. հունվարի սկզբին և արտացոլում է ընթացիկ իրողությունները, մասնավորապես գնաճի բարձր մակարդակի պայմաններում սահմանափակող քաղաքականության շարունակումը, ֆինանսական պայմանների խստացումը, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված անորոշությունների պահպանումն ու ռիսկերի բարձր մակարդակը: Բոլոր գլոբալ գլխավոր խաղացողները՝ ԱՄՆ-ը, ԵՄ-ն, Չինաստանը, տնտեսական թուլացման նոր փուլի շեմին են: Ի հավելումն՝ զարգացող և անցումային տնտեսություններում առկա խնդիրները գլոբալ տնտեսության աճի դանդաղման հավելյալ գործոն են հանդիսանում: Ըստ այդմ, դանդաղ աճի, ֆինանսական պայմանների խստացման, պարտքային ծանր բեռի սկզբնական, հետհամավարակային շրջանի բարդ պայմանները, համակցվում են բարձր գնաճի, էլ ավելի խիստ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների, առաջատար տնտեսություններում անբարենպաստ զարգացումների, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի պատճառով խորացած աշխարհաքաղաքական լարվածության իրավիճակում Համաշխարհային բանկը հավանական է համարում գլոբալ տնտեսական ռեցեսիայի սցենարի խաղարկումը[81]:

Աղյուսակ 3.1. Տնտեսական աճի կանխատեսումները, ըստ ՀԲ, տոկոս[82]

	2020	2021	2022	2023	2022-ի հունիսի կանխատեսումից տարբերությունը, տ.կ.	
					2022	2023
Համաշխարհային ՀՆԱ	-3,2	5,9	2,9	1,7	0,0	-1,3
ԱՄՆ	-2,8	5,9	1,9	0,5	-0,6	-1,9
Եվրոյի գոտի	-6,1	5,3	3,3	0,0	0,8	-1,9
Չինաստան	2,2	8,1	2,7	4,3	-1,6	-0,9
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	-1,7	6,7	0,2	0,1	3,2	-1,4
ՌԴ	-2,7	4,8	-3,5	-3,3	5,4	-1,3
Թուրքիա	1,9	11,4	4,7	2,7	2,4	-0,5
Միջին եկամտով երկրներ	-1,2	6,9	3,2	3,4	-0,1	-0,8

81 World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank. - p. 3.

82 Աղբյուրը՝ World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank. - p. 26.

Ցածր եկամտով երկրներ	1,6	3,9	4,0	5,1	0,0	-0,7

Զարգացած տնտեսությամբ երկրներում տնտեսական աճը 2022-ին, 2021-ի համեմատությամբ, դանդաղել է ավելի քան երկու անգամ 5,3%-ից հասնելով 2,5%-ի: Հատկանշական է, որ տնտեսական աճի այսպիսի կրճատում վերջին 50 տարիների ընթացքում ընդամենը 4-րդ անգամ է արձանագրվում: Ըստ որում, 2022-ի երկրորդ կիսամյակում տեղի է ունեցել տնտեսական պայմանների զգալի ձևախեղում տնային տնտեսությունների գնողունակության կտրուկ նվազման, զսպող դրամավարկային քաղաքականության, նաև՝ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով էներգակիրների գների զգալի աճի պատճառով:

Տնտեսական աճի տեմպերը գրեթե կիսվել են նաև զարգացող և անցումային տնտեսություններում 6,7 տոկոսից հասնելով 3,4%-ի (2022թ.): Ընդ որում, աճի տեմպերի դանդաղման հիմնական մասը բաժին է ընկնում 2022թ. երկրորդ կիսամյակին և համադրելի է թերևս միայն 2009 և 2020 թվականների ճգնաժամերի հետ:



Գծապատկեր 3.Ա. Տնտեսական աճի դանդաղումը զարգացող և անցումային տնտեսություններում[83]

Հետաքրքրական է, որ ՌԴ-ում 2022թ. տնտեսական անկման կանխատեսումն էապես վերանայվել է. եթե հունիսին կանխատեսվում էր մոտ 9 տոկոսանոց անկում, ապա այժմ անկումը ենթադրվում է -3,55%-ի տիրույթում: Մյուս կողմից, 2023-ի համար ՌԴ տնտեսությունում, ներքին գնահատականներով, կանխատեսվում էր 1,3% աճ[84], մինչդեռ միջազգային կառույցների ընթացիկ կանխատեսումները շատ ավելի հոռետեսական են:

Հումք արտահանող զարգացող երկրներում տնտեսական աճի կանխատեսումները վերանայվել են 1,6 տոկոսային կետով աճի ուղղությամբ (2022-ի համար՝ 1,9%), այն դեպքում, երբ հումք ներմուծող երկրներում աճի վերանայումը նվազման ուղղությամբ է՝ -0,8 տ.կ. չափով: Հարկ է հավելել, որ ՀԲ դասակարգմամբ Հայաստանը ներառված է նշված երկրներից առաջին խմբում:

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը նշանակալի ազդեցություն է գործել նաև գնաճային գործընթացների ինտենսիվացման վրա: Հետհամավարակային շրջանում առանց այդ էլ բարձր գնաճը, չնայած 2022-ի սկզբի որոշակի զսպմանը, հատկապես աշխարհաքաղաքական անկայունության պայմաններում նոր արագացում ստացավ:

Այսպես, 2022-ի ընթացքում գնաճի մակարդակը բարձրացել է գրեթե բոլոր երկրներում: Գլոբալ գնաճի մեդիանային մակարդակը 2022-ի երկրորդ կիսամյակում գերազանցեց 9 տոկոսի

83 Աղբյուրը՝ World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank. - p. 37.

84 Հովսեփյան Մ. Տնտեսական շոկերն ու հարկաբյուջետային շրջանակը: Արդյո՞ք կդիմանանք ցնցումներին/ Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 36:

շեմը, ինչը 1995թ-ից ի վեր արձանագրված առավելագույնն է: Զարգացող և անցումային տնտեսություններում գնաճի տեմպը հասել է գրեթե 10 տոկոսի, ինչը 2008թ-ից ի վեր ամենաբարձր մակարդակն է: Ինչ վերաբերում է զարգացած տնտեսություններին, ապա այստեղ 2022-ին գնաճը գտնվում է վերջին 30 տարիների ընթացքում ամենաբարձր մակարդակի վրա և գերազանցում է 9%-ը:

2022-ի ընդլայնվող գնաճը առաջարկի և պահանջարկի մի շարք գործոնների համակցման արդյունք է[85]: Մասնավորապես, պահանջարկի գնաճային խթաններից առավել նշանակալի են հետհամավարակային շրջանում պահանջարկի կառուցվածքային կերպափոխությունները, 2020-ին էականորեն սահմանափակված ոլորտների թողարկման նկատմամբ պահանջարկի առաջանցիկ աճը[86]: Առաջարկի գնաճային գործոններից է առանցքային հումքատեսակների առաջարկի էական կրճատումը, ինչը շոշափելի խթան ստացավ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը հանգեցրեց էներգակիրների և սննդի համաշխարհային գների կտրուկ աճին: Հավելենք, որ մի շարք երկրներում աշխատուժի առաջարկի սահմանափակումը բերեց աշխատանքային ծախսումների ավելացմանը, որի հետևանքը ներդրանքի և արտադրության ծախսերի ավելացման նոր շրջափուլն էր:

Աղյուսակ 3.2. Գնաճի կանխատեսումները, ըստ ՀԲ[87]

	2020	2021	2022	2023	2022-ի հունիսի անխատեսումից տարբերությունը, տ.կ.	
					2022	2023
Էներգակիրների գների ինդեքս	52,7	95,4	151,7	130,5	7,1	4,4
Ոչ էներգակիր ապրանքների գների ինդեքս	84,4	112,0	123,7	113,0	-8,4	-4,0

Սպառողական զամբյուղի կառուցվածքում սննդամթերքի բարձր տեսակարար կշիռը, հատկապես ցածր եկամտով երկրներում գնաճային ավելի սուր խնդիրների հանգեցրեց[88]: Բնականոն գնաճի գլոբալ մակարդակը զգալիորեն ավելացավ՝ գերազանցելով 6 տոկոսի շեմը, ինչը 1992-ից ի վեր առավելագույն մակարդակն է: Հատկանշական է, որ զգալի աճ են արձանագրել հատկապես կարճաժամկետ (մեկ տարվա հեռանկարով) գնաճային սպասումները: Ի հակադրություն, երկարաժամկետ (5 և ավելի տարի) հեռանկարի համար գնաճային սպասումների մակարդակը համեմատաբար ավելի կայուն է: Վերջինը լավատեսություն է ներշնչում երկրների կենտրոնական բանկերին առ այն, որ հատկապես երկարաժամկետ հատվածում կհաջողվի հաղթահարել գնաճի բարձր տեմպերը՝ այն վերադարձնելով նախորդ տասնամյակի ընթացքում սահմանված թիրախային միջակայքեր:

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանում 2022-ին տնտեսական աճի մակարդակը զգալիորեն նվազել է՝ ընդհուպ մինչև 0,2%: Գլխավոր պատճառը Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմն է, դրանով պայմանավորված էներգակիրների ճգնաժամը: Ռուսաստանի և Ուկրաինայի տնտեսությունները չդիտարկելու պարագայում այս տարածաշրջանում 2022-ի համար տնտեսական աճը գնահատվում է 2,1%-ի տիրույթում:

85 Ha, J., M. A. Kose, F. Ohnsorge. 2022. "Global Stagflation." Koç University-TUSIAD Economic Research Forum Working Papers 2204, Istanbul, Türkiye.
Shapiro, A. H. 2022. "How Much Do Supply and Demand Drive Inflation?" FRBSF Economic Letter, Federal Reserve Bank of San Francisco, San Francisco.

86 Kalemli-Özcan, Ş., di Giovanni, J., A. Silva, M. Yildirim. 2022. "Challenges for Monetary Policy in a Rapidly Changing World." ECB Forum on Central Banking, European Central Bank, Frankfurt

87 Աղբյուրը՝ World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank. - p. 26.

88 Ball, L., D. Leigh, P. Mishra. 2022. "Understanding U.S. Inflation During the COVID Era." BPEA Conference Drafts, Brookings Paper on Economic Activity, Washington, DC

Հայաստանում 2022-ի համար տնտեսական աճի գնահատականը 10,8% է: Այն, չնայած որոշակիորեն ցածր է, քան ՀՀ կառավարության գնահատականները, սակայն մյուս կողմից, 7,3 տոկոսային կետով բարձր է 2022թ. հունիսի կանխատեսումային մակարդակից: Հետաքրքրական է, որ Հայաստանը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այն փոքրաթիվ երկրների շարքում է, որոնց տնտեսական աճի 2022թ. կանխատեսումը վերանայվել է՝ ավելի քան 7 տ.կ. աճի ուղղությամբ: Հայաստանի 2022թ. տնտեսական աճի գնահատականի աճը պայմանավորված է գլխավորապես Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով՝ մեր տնտեսության համար ավելի շատ նպաստավոր գործոնների ազդեցությամբ՝ այցելությունների, բիզնեսի վերատեղակայման, դրամական փոխանցումների մեծ ծավալը, ՌԴ տնտեսությունում ազատ շուկայական խորշերի առաջացումը և դրանց հագեցումը հայաստանյան ծագման կամ մեր տնտեսությունից վերաարտահանվող ապրանքներով: Հավելենք, որ Էական է նաև ՌԴ տնտեսության անկման գնահատականների վերանայումը: Ի հակադրություն նախորդ կանխատեսումների, 2022-ի երկրորդ կիսամյակում ՌԴ կառավարությանը հաջողվեց պահպանել երկրի ֆինանսատնտեսական կայունությունը, Էներգակիրների գների բարձր մակարդակի շնորհիվ ապահովել բյուջետային եկամուտների բավարար մակարդակ, նաև՝ տնտեսվարողների և տնային տնտեսությունների աջակցության մեծածավալ փաթեթների կիրառմամբ որոշակիորեն հակակշռել արևմտյան պատժամիջոցների կարճաժամկետ հնարավոր բացասական ազդեցությունները: Նաև՝ հարկ է նկատի ունենալ, որ հատկապես ՌԴ Էներգետիկ ոլորտի նկատմամբ սահմանված պատժամիջոցների հնարավոր կրիտիկական Էֆեկտը ավելի շատ միջնաժամկետ և երկարաժամկետ ներգործություն կարող է ունենալ, հետևաբար 2022-ի ընթացքում դրանց ազդեցությունը պակաս զգալի է եղել: Մյուս կողմից, ՌԴ տնտեսության համար 2023 և 2024 թվականների կանխատեսումները վերանայվել են՝ ՀՆԱ անկման խորացման ուղղությամբ՝ համապատասխանաբար 1,3 և 0,6 տ.կ. չափով: Այս հանգամանքը ՀՀ տնտեսության 2023 և 2024 թվականների համար աճի կանխատեսումային մակարդակների նվազեցման ուղղությամբ վճռական դերակատարում է ունեցել: Ըստ այդմ, Հայաստանի տնտեսության համար 2023-ին ՀԲ-ն կանխատեսում է 4,1% աճ, ինչը 0,5 տ.կ.-ով ցածր է հունիսի կանխատեսումից: 2024-ի համար կանխատեսումը 4,8% է, ինչը ևս փոքր-ինչ ցածր է հունիսին կանխատեսած մակարդակից: Սա նշանակում է, որ ՀԲ գնահատմամբ՝ ՀՀ տնտեսության հետագա զարգացման վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի միջնաժամկետ հետևանքները նշանակալի վարընթաց ազդեցության ռիսկեր են պարունակում:

Աղյուսակ 3.3. Տնտեսական աճի կանխատեսումները, Եվրոպա և Կենտրոնական Ասիա, ըստ ՀԲ, տոկոս[89]

Երկիրը	2020	2021	2022	2023	2022-ի հունիսի կանխատեսումից տարբերությունը, տ.կ.	
					2022	2023
Հայաստան	-7,2	5,7	10,8	4,1	7,3	-1,3
Ադրբեջան	-4,3	5,6	4,2	2,8	1,5	0,6
Բելառուս	-0,9	2,6	-6,2	-2,3	0,3	-3,8
Վրաստան	-6,8	10,4	10,0	4,0	4,5	-1,5
Ղազախստան	-2,5	4,1	3,0	3,5	1,0	-0,5
Ղրղզստան	-8,4	3,6	5,5	3,5	7,5	0,1
Մոլդովա	-7,4	13,9	-1,5	1,6	-1,1	-1,1
Լեհաստան	-2,0	6,8	4,4	0,7	0,5	-2,9

89 Աղբյուրը՝ World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank. - p. 66.

Տաջիկստան	4,4	9,2	7,0	5,0	7,4	1,7
Ռուսաստան	-2,7	4,8	-3,5	-3,3	5,4	-1,3
Ուկրաինա	-3,8	3,4	-35,0	3,3	10,1	1,2

Արժույթի միջազգային հիմնադրամի կանխատեսումների համաձայն, համաշխարհային տնտեսության առաջիկա զարգացումները մեծապես պայմանավորված են լինելու ինչպես դրամավարկային քաղաքականության արդյունավետությամբ, այնպես էլ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ընթացքով: Բացի այդ, կարևոր դերակատարում է վերապահվում Չինաստանում առաջարկի խթանմանը, ինչը համավարակի նոր ալիքի պայմաններում լրջորեն սահմանափակվեց 2022թ. ընթացքում[90]:

Հոկտեմբերին հրապարակված կանխատեսումների արդյունքների համաձայն, 2022-ին տնտեսական աճը կկազմի 3,2%, ինչը գրեթե 2 անգամ պակաս է 2021-ի մակարդակից, իսկ 2023-ի համար սպասվում է համաշխարհային տնտեսության 2,7% աճ:

Գլոբալ գնաճը 2022-ի համար գնահատվել է 8,8%-ի չափով, 2023-ի կանխատեսումը 6,5% է, 2024-ին՝ 4,1%:

Միջնաժամկետ տնտեսական զարգացման ռիսկերը հիմնականում վարընթաց ուղղվածություն ունեն: Դրանց շարքում առավել նշանակալի են դիտվում հետևյալները.

- **Քաղաքականության սխալները.** գերագնահատված կամ թերագնահատված գնաճի վրա հիմնված մոնետար քաղաքականությունը: Գնաճի բարձր մակարդակը, համավարակի հաղթահարմանը միտված Էժան փողի քաղաքականությունը հանգեցրել են գնաճի բարձր սպասումների խարսխմանը91: Ստեղծված պայմաններում բնականոն գնաճի նեղ միջակայքի թիրախավորումը բավականին բարդ խնդիր է և քաղաքականության առջև լուրջ մարտահրավերներ է առաջադրում: Բացի այդ, ցածր և միջին եկամտով երկրները, զարգացած տնտեսությունների համեմատությամբ, գնաճի հաղթահարման համար ավելի բարձր գին պետք է վճարեն92:
- **Գնաճային գործոնների ազդեցության տևողության երկարումը, չնայած** և 2024-ի համար հետհամավարակային շրջանում սկզբնապես ակնկալվում էր գնաճի թուլացում, սակայն, հատկապես Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի համապատկերում ի հայտ են եկել կամ ակտիվացել են մի շարք գործոններ, որոնք կարող են հետաձգել գնաճը չափավոր մակարդակի բերելը: Խոսքը, առաջին հերթին, Էներգակիրների և պարենային ապրանքների գների պահպանվող բարձր մակարդակն է, դրանց շուկաներում պահպանվող անորոշությունը:
- **Պարտքի խնդիրները և դրանց խոցելիությունը, հատկապես անցումային և զարգացող տնտեսություններում:** Այս գործոնով պայմանավորված մարտահրավերների ուժեղացումը ևս մասնակիորեն բացատրվում է Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված աշխարհաքաղաքական անորոշությունների աճով:
- **Եվրոպայում գազի մատակարարումների կրճատումը:** Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը շարունակում է բացասական ազդակներ հաղորդել եվրոպական և համաշխարհային Էներգետիկ շուկաներին: Մասնավորապես, ռուսական գազի

90 International Monetary Fund. 2022. World Economic Outlook: Countering the Cost-of-Living Crisis. Washington, DC. October. - p. 18.

91 Adrian, Tobias, Christopher Erceg, and Fabio Natalucci. 2022. "Soaring Inflation Puts Central Banks on a Difficult Journey." IMF Blog, August 1, 2022.

92 Unsal, D. Filiz, Chris Papageorgiou, and Hendre Garbers. 2022. "Monetary Policy Frameworks: An Index and New Evidence." IMF Working Paper 22/22, International Monetary Fund, Washington, DC

մատակարարումը դեպի Եվրոպա էականորեն կրճատվել է և շարունակում է նվազել: Այս հանգամանքը ոչ միայն կարճաժամկետ, այլ նաև միջնաժամկետ ազդեցություն կունենա տնային տնտեսությունների սպառման, կենսամակարդակի, նաև՝ գնաճային սպասումների վրա: Գործոնի ազդեցության ուժգնությունը տարբերվում է ըստ երկրների և կախված է ենթակառուցվածքային, լոգիստիկական խնդիրների, մատակարարումների շղթայում այսպես կոչված «նեղ տեղերի» հաղթահարման արդյունքների հետ93:

- **Համաշխարհային տնտեսության հատվածականացումը, միջազգային կոոպերացիայի խորացման խափանումը կամ դանդաղումը:** Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմը նշանակալիորեն փոխում է ՌԴ-ի և շատ երկրների, այդ թվում՝ Հայաստանի, փոխգործակցության տրամաբանությունը, ոլորտները, գերակայություններն ու ծավալները: Պատերազմը խթանել է նաև այլ աշխարհաքաղաքական հակամարտությունների սրացումը, մասնավորապես՝ արևելյան Ասիայում և այլ երկրներում ու տարածաշրջաններում: Նմանօրինակ ճնշումները տասնամյակներով ձևավորված կոոպերացիոն կապերի, արժեշղթաների քանդման, ձևափոխման ռիսկեր են պարունակում: Այս ռիսկերը նշանակալի են համարվում հատկապես առաջիկա 3-5 տարիների համար, երբ կարող են համաշխարհային տնտեսությունում առանձին հատվածների բյուրեղացման ակտիվ գործընթացներ ընթանալ: Այս ամենը գլոբալ տնտեսական անվտանգության, կլիմայի փոփոխությունների կանխարգելման ոլորտներում երկրների արդյունավետ փոխգործակցությունը լուրջ սպառնալիքի տակ է դնում: Հատվածականացման գործընթացները կարող են նաև հանգեցնել աշխարհաքաղաքական հակամարտ տարբեր գոտիների ձևավորմանը, ինչը բացասական ազդեցություն կունենա գլոբալ առևտրի և կապիտալի հոսքերի վրա:

ՀՀ տնտեսության իրական հատվածում զարգացումները

2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը աննախադեպ բարձր մակարդակներ է արձանագրել: Այսպես, մարտից մինչև հուլիս ամիսները տնտեսական ակտիվությունը շարունակաբար արագանում էր՝ հուլիսին հասնելով իր առավելագույն մակարդակին՝ 2021թ. հուլիսի նկատմամբ 19,4% հավելաճով: Հուլիս-սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը որոշ նվազում արձանագրեց, սակայն թե՛ այս, և թե՛ հաջորդ ամիսներին շարունակեց պահպանվել երկնիշ աճի մակարդակի վրա (գծ. 3.1):



Գծապատկեր 3.1. Տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը, համապատասխան ամիսը

93 Flanagan, Mark, Alfred Kammer, Andrea Pescatori, and Martin Stuermer. "How a Russian Natural Gas Cutoff Could Weigh on Europe's Economies." IMFBlogs, July 19, 2022. https:// blogs.imf.org/2022/07/19/how-a-russian-natural-gas-cutoff-could-weigh-on-europes-economies.

նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ[94]

Հետաքրքրական է արձանագրել, որ 2012-2016թթ. և 2017-2021թթ. չի եղել որևէ ամիս, որի ընթացքում տնտեսական ակտիվության աճի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ տեմպի միջին մեծությունը գերազանցի 6 տոկոսը: Ըստ այդմ, տնտեսական ակտիվության բնականոն կամ ներուժային աճի մասին դատողություններում կարելի է որպես մեկնակետ կամ մոտավոր գնահատական դիտարկել հենց ամսական ցուցանիշների տ/տ աճի 6 տոկոսի տիրույթը: Այս առումով պատահական չէ նաև այն, որ 2022թ. մարտ-նոյեմբերի ամիսներին ՏԱՑ աննախադեպ աճի մեկնակետը՝ մարտ ամսվա համապատասխան մակարդակը, գտնվում է նկարագրված տիրույթում:



Գծապատկեր 3.2. Ապրիլ, մայիս և հունիս ամիսների ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ[95]

2022թ. ապրիլին տնտեսական ակտիվությունը նախորդ տարվա ապրիլի համեմատությամբ աճել է 8,8 տոկոսով: Ճիշտ է, այս արդյունքը էապես ցածր է 2021թ. մակարդակից (23,4%), սակայն վերջինը առաջին հերթին պետք է դիտարկել 2020թ. խոր անկմանը (-16,7%) հաջորդած վերականգնման համապատկերում: Պատահական չէ, որ 2020թ. առավել մեծ անկման ամիսներին 2021թ. նույն ամիսներին ավելի մեծ աճ է գրանցվել: 2012-2019թթ. նույն ապրիլ ամսվա տնտեսական ակտիվության առավելագույն տ/տ աճը չի գերազանցել 10 տոկոսը: Նույնը պետք է փաստել նաև մայիս և հունիս ամիսների համար (գծ. 3.2):



Գծապատկեր 3.3. Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ամիսների նկատմամբ[96]

94 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները:

95 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

96 Տվյալների աղբյուրը՝ նույն տեղում:

2022թ. հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության աճը, նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ, կազմել է 14,6-19,4 տոկոս: Նույն ամիսների համար 2020թ. տնտեսական ակտիվության տ/տ անկումը կազմել է -7,7%-ից մինչև -11,4%: 2022թ. աճը 2020թ. անկման աստիճանական վերականգնմամբ բացատրելը ուժեղ փաստարկ չէ՝ նախ այն պատճառով, որ 2021-ի նույն ամիսներին տնտեսական ակտիվության աճը շատ ավելի ցածր է եղել, քան 2022-ին: Բացի այդ, 2022-ին առավելագույն տնտեսական ակտիվության ամիսներին 2020թ. բաժին են ընկել անկման համեմատաբար ցածր մակարդակներ: Ստացվում է, որ 2020թ. ցածր անկումը 2022-ին ստեղծել է ավելի բարձր տնտեսական ակտիվություն, քան 2020-ի առավել խոր անկումը (գծ. 3.3):

Ըստ էության, 2012-2019թթ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշի աճը՝ նախորդ տարվա նույն ամիսների համեմատությամբ, հիմնականում գտնվել է 0-ից 7 տոկոս միջակայքում: Ավելին, նույն այդ ժամանակահատվածում արձանագրված առավել բարենպաստ արտաքին շոկերի ազդեցությամբ արձանագրվել է հատվածային երկնիշ աճ, որը, սակայն, կայուն բնույթ չի կրել: Բացի այդ, 2014-ի ղրիմյան իրադարձություններին հաջորդած ՌԴ նկատմամբ սահմանված պատժամիջոցների պայմաններում ՀՀ տնտեսության վրա փոխանցված ազդեցությունը առավելապես բացասական բնույթ է կրել՝ հանգեցնելով տնտեսական ակտիվության աճի տեմպերի դանդաղման:



Գծապատկեր 3.4. Նոյեմբեր ամսվա ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ[97]

2022թ. նոյեմբերին տնտեսական ակտիվության ցուցանիշը նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ աճել է 13,8%-ով (գծ. 3.4): Ընդ որում, ի տարբերություն նախորդ ամիսների, նոյեմբերի այս ցուցանիշը ցածր է 2021թ. համապատասխան մակարդակից, ինչն էլ, իր հերթին, 2020թ. -10% անկման վերականգնողական արձագանքն է: 2012-2019թթ. նոյեմբեր ամսվա ՏԱՑ-ը նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ զգալի վայրիվերումներ է գրանցել՝ 2012-2015-ին իջնելով զրոյական մակարդակի, որից հետո արագացում ստանալով ընդհուպ մինչև 8-10 տոկոս մակարդակի: Այնուհանդերձ, ներքին սահմանափակ ռեսուրսների ու որոշ արտաքին նպաստավոր գործոնների հաշվին տնտեսական ակտիվության առավելագույն աճը, որը կարող է գեներացվել Հայաստանի տնտեսական համակարգում, գտնվում է 10 տոկոսի տիրույթում: Ինչ վերաբերում է տնտեսական ակտիվության աճի միջին տեմպին կամ միտմանը, ապա լոգարիթմական ֆունկցիայի կիրառմամբ դրա դուրսբերման արդյունքում 2022թ. համար ՏԱՑ աճի միտման գնահատականը ստացվել է 6,0-6,5 տոկոսի միջակայքում: Սա նշանակում է, որ 2022թ. նոյեմբերին ՏԱՑ աճի փաստացի մակարդակը տնտեսության ներուժային հնարավորություններից բխող միջին միտման գնահատումային մակարդակը գերազանցել է շուրջ 8 տոկոսային կետով:

97 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.5. Դիտարկվող ժամանակահատվածների կուտակային ՏԱՑ-ը՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածների նկատմամբ, տոկոսներով[98]

Հարկ է արձանագրել, որ 2020թ. նախորդող ժամանակահատվածում արձանագրված միտումների լոգարիթմական մոդելավորման հիման վրա ստացված գնահատումային արժեքները, որոնք, մասնավորապես, վերաբերում են 2022թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածին, ՏԱՑ ընդլայնման կանխատեսումային արժեքը դիտարկում են 6,0-6,5 տոկոսի տիրույթում, իսկ առավել հավանականային արժեքը՝ 6,24 տոկոսն է: Իսկ, եթե միտումների մոդելավորման գործընթացում ներառենք նաև 2010-2021թթ. զարգացումները, ապա 2022-ի համար դուրս բերված կանխատեսումային գնահատականը, տարբեր տրենդային մոդելների դիտարկման պարագայում, տատանվում է 2,8-3,3% տիրույթում: Սա նշանակում է, որ 2022թ. դիտարկվող ժամանակահատվածի ՏԱՑ հավելաճի տեմպը բազմապատիկ գերազանցում է նախորդող ժամանակահատվածում դրսևորվող միտումներին համահունչ զարգացումների մակարդակը:

ՀՀ 2023թ. բյուջետային ուղերձի համաձայն, 2022թ. ձևավորված և առաջիկայում սպասվող արտաքին զարգացումների, ՌԴ-ից դեպի Հայաստան SS ոլորտի ընկերությունների, մարդկանց և կապիտալի աննախադեպ ներհոսքերի, ինչպես նաև պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների արդյունքում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացման և ՀՀ կառավարության կողմից իրականացվող հարկաբյուջետային միջոցառումների պայմաններում 2022թ. սպասվում է 11% տնտեսական աճ, որը բարձր է վերջին 14 տարիների ընթացքում գրանցված տնտեսական աճերից[99]:

Սպասվող արտաքին տնտեսական միջավայրի, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքերի, SS ոլորտի ընկերությունների տեղափոխման շնորհիվ առաջացած դրական զարգացումների որոշակի պահպանման և ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով նախատեսված տնտեսության և տնտեսական աճի ներուժի բարձրացմանն ուղղված քաղաքականության միջոցառումների պայմաններում 2023թ. կանխատեսվում է 7.0% տնտեսական աճ:

2023թ. տնտեսական աճի կանխատեսումների հիմքում ՀՀ կառավարության կողմից դրված գործոնների թվում առանձնակի դերակատարում ունեն Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի ուղղակի և անուղղակի ազդեցությամբ ձևավորվելիք իրողությունների վերաբերյալ արված ենթադրություններն ու կանխատեսումները:

Այսպես, համավարակից հետո համաշխարհային տնտեսության վերականգնմանը

98 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

99 ՀՀ կառավարության 2023թ. բյուջետային ուղերձ (բացատրագիր), Երևան, 2022, Բաժին 1.3. «Մակրոտնտեսական զարգացումներ և կանխատեսումներ»:

զուգընթաց, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ՀՀ գործընկեր երկրներում կարձանագրվի տնտեսական աճի տեմպերի դանդաղում: 2022թ. հոկտեմբեր ամսվա ԱՄՀ կանխատեսումների համաձայն 2022թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրների արտաքին պահանջարկը (առանց ՌԴ) կաճի շուրջ 3,0%-ով ՝ նախորդ՝ 2022թ. հունիս ամսվա 2,7% աճի կանխատեսումների փոխարեն: Կանխատեսումների համաձայն 2023թ. ՀՀ հիմնական գործընկեր երկրներում կշարունակվի աճի տեմպերի դանդաղումը՝ մնալով նախաճգնաժամային պոտենցիալներից ցածր մակարդակում: Ռուսաստանում և՛ 2022թ., և՛ 2023թ. սպասվում է խորը տնտեսական անկում: Այնուհանդերձ, ևս մեկ անգամ պետք է փաստել, որ հոկտեմբերի կանխատեսումները փոքր-ինչ ավելի նպաստավոր են՝ հունիսի կանխատեսումների համեմատությամբ:

Չնայած տարբեր կանխատեսումներով 2022թ. սպասվում էր նավթի միջազգային գների աճ (օրինակ՝ «Բլումբերգ» գործակալությունը կանխատեսում էր շուրջ 45% աճ)՝ պայմանավորված հիմնականում Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված՝ ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների հետևանքով ՌԴ-ից մատակարարման շղթաների խափանումներով, այնուհանդերձ տարեվերջին նավթի գնանկումը որոշակիորեն հավասարակշռեց պատերազմի առաջին ամիսներին արձանագրված նավթի միջազգային գների կտրուկ աճը: Պղնձի միջազգային գների անկումը տեղավորվում է կանխատեսված 4-5%-ի տիրույթում: 2023թ. նավթի և պղնձի գները կնվազեն համապատասխանաբար՝ 12% և 9%-ով:

Պատժամիջոցների հետևանքով որոշ երկրներից ՌԴ ներմուծման շուկայի սահմանափակումների արդյունքում տեղի է ունենում ՀՀ-ից դեպի Ռուսաստան արտահանման պահանջարկի ավելացում: ՀՀ կառավարության 2022թ. օգոստոսի կանխատեսումներով, 2022թ. սպասվում էր դեպի ՌԴ ապրանքների արտահանումը դոլարային արտահայտությամբ կաճի շուրջ 55%, մինչդեռ փաստացի աճի նախնական գնահատականը, հիմնվելով 11 ամիսների արդյունքների վրա, շատ ավելի բարձր է՝ շուրջ 170%: 2023թ. դրական զարգացումների պահպանման պայմաններում կանխատեսվել է դեպի ՌԴ արտահանման շուրջ 20% աճ: Հաշվի առնելով առկա միտումները, մեր գնահատման կանխատեսումային այս մակարդակը 2023-ին կհաջողվի լիարժեքորեն ապահովել:

Կանխատեսումների համաձայն 2023թ. դեպի ՀՀ զբոսաշրջիկների թիվը կաճի 14.6%-ով: ՌԴ-ից և այլ երկրներից դեպի Հայաստան դրամական փոխանցումները 2023թ. կաճեն շուրջ 4%-ով: ՌԴ դեմ կիրառված պատժամիջոցների արդյունքում ՌԴ-ից դեպի Հայաստան տեղափոխված SS ոլորտի ընկերությունների և աշխատակիցների որոշ մասը 2023թ. ընթացքում կմնան Հայաստանում:

2022 թ. դրական զարգացումների պայմաններում ՀՀ տնտեսությունը գտնվել է ներուժային մակարդակից ավելի բարձր դիրքում՝ մտնելով դրական ճեղքի տիրույթ: Կանխատեսվում է, որ 2023թ. ՀՀ տնտեսությունը կշարունակի մնալ դրական ճեղքի տիրույթում: Միաժամանակ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված վերընթացի ռիսկի գործոնների ազդեցության որոշակի պահպանման, նաև՝ պետական կապիտալ ծախսերի մակարդակի թիրախային բարձրացման և արտահանման առաջանցիկ աճի պայմաններում Հայաստանի տնտեսության ներուժային աճը կբարձրանա:



Գծապատկեր 3.6. Արդյունաբերական արտադրանքի ծավալի ինդեքսը, հունվար-նոյեմբեր ամիսներ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, տոկոսներով[100]

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի՝ Հայաստանի տնտեսության ընդհանուր ակտիվության վրա դրական շոկային ազդեցությունը, ըստ տնտեսական գործունեության ոլորտների խիստ անհամաչափ բաշխվածություն ունի:

Արդյունաբերությունում աճի ցուցանիշները շատ ավելի զուսպ են, քան ՏԱՑ-ի ավելացումն ըստ ամիսների: Այսպես, 2022թ. հունվար-նոյեմբերին արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 8,4% (գծ. 3.6): Ընդհանուր առմամբ, 2013-2022թթ. դիտարկվող ժամանակահատվածում արդյունաբերության աճը ընդգծված պարբերաշրջանային բնույթ է կրում. 2014-ին նախորդ տարվա համեմատությամբ աճի տեմպերի նվազումը հետագա տարիներին վերափոխվել է աճի արագացմամբ՝ ընդհուպ մինչև 2017թ. երկնիշ ցուցանիշով ընդլայնումը: 2018-ին արդյունաբերությունում աճի տեմպի եռակի թուլացում է արձանագրվել, հաջորդիվ՝ նորից արագացում, որից հետո գալիս է 2020թ. նվազումը՝ հաջորդող երկու տարիների աստիճանական վերականգնմամբ:

2020թ. արդյունաբերության աճում ռուս-ուկրաինական ռազմաքաղաքական հակամարտության ազդեցության չափի վերլուծությունը պահանջում է արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսի դիտարկում՝ ըստ առանձին ոլորտների և ճյուղերի:



Գծապատկեր 3.7. Արդյունաբերության առանձին ճյուղերում արտադրության հավելաճի տեմպը հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ[101]

100 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

101 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

Ուշագրավ է մշակող արդյունաբերության ընդլայնումը՝ դիտարկվող ժամանակահատվածի համար ոչ նախադեպային տեմպով: Էլ ավելի ուշագրավ է սննդամթերքի արտադրության աճի բարձր տեմպը: 2016-2019թթ. սննդամթերքի արտադրության աճի միջին տեմպը կազմել է 4,7 տոկոս, հետհամավարակային վերականգնման առաջին տարում՝ 2021-ին, ոլորտը աճել է ընդամենը 2 տոկոսով: Ավելին, 2008-2009թթ. ճգնաժամին հաջորդած վերականգնման տեմպը սննդարդյունաբերության ոլորտումը կազմել է 6,4 տոկոս (գծ. 3.7): Այս համատեքստում, 2022թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում սննդարդյունաբերության ընդլայնումը 10 տոկոսով չի տեղավորվում տնտեսության երկարաժամկետ զարգացման միտումների շրջանակներում և էապես արդյունք է շոկային գործոնների ազդեցությամբ ոլորտին հաղորդած լրացուցիչ իմպուլսների:



Գծապատկեր 3.8. Առևտրի շրջանառության աճը հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, տոկոսներով:[102]

2022թ. հունվար-նոյեմբեր ամիսներին առևտրի շրջանառության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 16,2%: Աճի այս ցուցանիշը աննախադեպ բարձր է 2009թ-ից ի վեր: Դրան մոտ մակարդակ արձանագրվել է 2017-ին (14,4%), այն էլ՝ 2016-ի զրոյական աճի և 2015-ի 7 տոկոս անկման համապատկերում լիովին բացատրելի է՝ որպես զուտ վերականգնողական գործընթաց: Մինչ այդ՝ 2010-2014թթ. առևտրի ոլորտում շրջանառության աճի տեմպը շատ ավելի համեստ, բայց միաժամանակ՝ կայուն բնույթ է կրել՝ տատանվելով 4-ից 5 տոկոսի շրջակայքում (գծ. 3.8):

Ուշագրավ է, որ 2022թ. հունվար-նոյեմբերին առևտրի ոլորտում շրջանառության երկնիշ աճը, ըստ ոլորտների խիստ անհավասարաչափ է բաշխված: Այսպես, մանրածախ առևտուրն ավելացել է ընդամենը 2,4%-ով, այն դեպքում, երբ մեծածախ առևտրի շրջանառությունը նույն ժամանակահատվածում աճել է ավելի քան 25%-ով, իսկ ավտոմեքենաների առևտուրը՝ 46,6%-ով (գծ. 3.9):

102 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.9. Առևտրի շրջանառության աճի տեմպը, ըստ ոլորտների, հունվար-նոյեմբեր, կուտակային, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, տոկոսներով[103]

Նկարագրվածը ևս մեկ վկայությունն է այն իրողության, որ ՀՀ առևտրի ոլորտում աննախադեպ աշխուժությունը ավելի շուտ շոկային իրադարձության հետևանքով արտաքին պահանջարկի ընդլայնմամբ ակտիվացած գործընթացների արդյունք է: Մյուս կողմից, ի հայտ է գալիս մի երևույթ, երբ արտաքին շոկային գործոնի արդյունքում ձևավորված պահանջարկն ու ներքին գործընթացներով, տնտեսության ներուժային հնարավորություններից ածանցված պահանջարկի բաղադրիչները անհամաչափ զարգացում են ցուցաբերում, արտաքինից ներքին ներուժային գործոնների վրա փոխանցման էֆեկտը լիարժեք չի գործում, ինչը նշանակում է, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով սկզբնավորված դրական տնտեսական շոկերի արդյունքում ՀՀ տնտեսությունում միջանկյալ խարիսխների ձևավորմանը նպաստելու հավանականությունը խիստ ցածր է:



Գծապատկեր 3.10 Մանրածախ և մեծածախ առևտրի մասնաբաժինն ընդհանուր առևտրի կառուցվածքում, հունվար-նոյեմբեր, տոկոսներով[104]

Մյուս կողմից, ՀՀ առևտրի ոլորտում տեղի ունեցող տրանսֆորմացիաները երկարաժամկետ բնույթ ունեն: Ինչը նշանակում է, որ վերը ձևակերպված դիտարկումը քիչ թե շատ օբյեկտիվ իրողությամբ պայմանավորված պատկերի նկարագրություն է և ոչ այնքան ընթացիկ

103 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

104 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

քաղաքականության ձախողման վկայություն: Այսպես, 2009-ից ի վեր առևտրի շրջանառության կառուցվածքում մեծածախ առևտրի մասնաբաժինը կայուն աճ է արձանագրում, որը պահպանվում է դիտարկվող ամբողջ ժամանակահատվածի ընթացքում (գծ. 3.10): Արդյունքում, 2022-ի առաջին 10 ամիսներին մանրածախ առևտրի մասնաբաժինը ընդհանուր առևտրի կառուցվածքում կազմել է 38% (2009-ի 66%-ի փոխարեն), իսկ մեծածախ առևտրի մասնաբաժինը 2022-ին հասել է 58%-ի (2009-ին՝ 30%): Հարկ է լրացուցիչ արձանագրել, որ վերջին տարվա ընթացքում նկարագրված գործընթացն էլ ավելի է արագացել:

2022-ի հունվար-նոյեմբերին ծառայությունների ոլորտն աննախադեպ աճ է արձանագրել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընդլայնվելով ավելի քան 28%-ով: 2009-ից ի վեր նշվածը ոլորտի պատմականորեն արձանագրված ամենամեծ աճն է, որը 10 տոկոսային կետով գերազանցում է երկրորդ աճի երկրորդ ամենաբարձր ցուցանիշը (2018թ.՝ 18,4%, գծ. 3.11):



Գծապատկեր 3.11. Ծառայությունների ոլորտում աճի տեմպը, հունվար-նոյեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, տոկոսներով[105]

Ծառայությունների ոլորտի աճի վրա ռուս-ուկրաինական հակամարտության ազդեցությունը վերլուծելիս պետք է հաշվի առնել, որ դիտարկվող տարիների ընթացքում առնվազն երկու անգամ ոլորտի անկումը (2009-ին) կամ աճի դանդաղումը (2013-ին) հաջորդ տարվա ընթացքում կերպափոխվել է 6,5-7,1 տոկոսի տիրույթում գտնվող աճի: Նույնպիսի աճ է արձանագրվել նաև 2021-ին, հաջորդել է 2020-ի շատ ավելի խորը՝ 13,6% անկմանը: Սա կարող է նշանակել, որ ծառայությունների ոլորտը համավարակով և 44-օրյա պատերազմով պայմանավորված տնտեսական հզոր ցնցումից 2021-ին վերականգնվել է ոչ լրիվ չափով, իսկ 2022-ին վերականգնումը շարունակվել է: Չհերքելով այս փաստարկը, պետք է միաժամանակ հաշվի առնել, որ ծառայությունների հատվածի աննախադեպ ընդլայնումը առաջին հերթին պայմանավորվել է, հատկապես այն ոլորտների աճով, որոնք ուղղակի առնչություն ունեն Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանք հանդիսացող իրողությունների հետ:

ՀՀ ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածը առավելագույն աճն արձանագրած ծառայությունների ոլորտն է: Այն, ինչ-որ իմաստով, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով դրսևորված արտաքին տնտեսական շոկերի գլխավոր «շահառու» ոլորտներից է: 2022թ. հունվար-նոյեմբերին ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընդլայնվել է գրեթե 50 տոկոսով (գծ. 3.12):

105 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.12. Ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտի աճի տեմպը հունվար-նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, տոկոսներով[106]

Փորձելով անդրադառնալ այն հարցին, թե ի՞նչ տիրույթում է գտնվում բուն Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ի հայտ եկած գործոններով պայմանավորված ոլորտի աճի չափը, հարկ է նկատի ունենալ մի շարք իրողություններ: Առաջինը՝ ոլորտի երկրորդ առավելագույն աճի տեմպը 32 տոկոսն է, որն արձանագրվել է 2008-2009թթ. ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված խոր անկումից վերականգնման երկրորդ տարում, այսինքն՝ դրանում զգալի է վերականգնողական աճի բաղադրիչը: Բացի այդ, 2020թ. նախորդող ժամանակահատվածում դրսևորված միտումները որոշակիորեն նման են ոլորտի՝ 2011-2014թթ. զարգացման միտումներին, երբ բարձր աճը աստիճանաբար հանգելով ու հասնելով նվազագույն կետին, հետագայում վերափոխվում է արագ աճի: Այս համատեքստում ոլորտի ներուժային աճի առավելագույն սահմանը, մեր գնահատմամբ, գտնվում է 20-25 տոկոսի տիրույթում, ուստի, որոշակի մոտարկմամբ, ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում 2022թ. առաջին 10 ամիսներին արձանագրված աճի կեսից ավելին Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված արտաքին շոկերի ազդեցության արդյունքի փորձագիտական գնահատական կարելի է համարել:

Ծառայությունների հատվածում 2022թ. հունվար-նոյեմբերին արձանագրված աճի տեմպի ցուցանիշով ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտին հաջորդում են տեղեկատվության և կապի, ինչպես նաև՝ տրանսպորտի ոլորտները: Դրանք ևս ուղղակիորեն առնչվում են Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ստեղծված իրողություններով գեներացված արտաքին շոկերով հաղորդված աճի բարձր տեմպերի հետ: Այսպես, դիտարկվող ամիսներին նշված ոլորտներում աճի տեմպը գերազանցել է 37%-ը, ինչը դիտարկվող բոլոր տարիների համար աննախադեպ բարձր մակարդակ է: Ըստ որում, եթե տրանսպորտի պարագայում ոլորտի զարգացման ընթացքը լուրջ վայրիվերումներ է ապրել, որի ընթացքում անկումներն ու դրանց համարժեք վերականգնումները անմիջականորեն հաջորդել են միմյանց, ապա տեղեկատվության և կապի ոլորտի պարագայում նույն դատողությունը կիրառելի չէ: 2017-ից սկսած այս ոլորտը կայուն վերելք է ապրում՝ 10-12 տոկոս տարեկան աճի շրջանակներում (գծ. 3.13): Այս համատեքստում, 2022-ին ոլորտում արձանագրված 40% աճի կառուցվածքում մոտ 1/3-ի չափով նպաստումը կարելի է վերագրել ներծին, բնականոն, պոտենցիալ աճի գործոններին, իսկ առնվազն 2/3-ի չափով նպաստումը արտաքին տնտեսական շոկային գործոններինն է:

106 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.13. Տրանսպորտի, տեղեկատվության և կապի աճի տեմպը, հունվար-նոյեմբեր ամիսներին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, տոկոսներով[107]

Կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում 2022թ. առաջին 11 ամիսներին արձանագրված համեմատաբար բարձր աճը ևս մասնակիորեն պայմանավորված է Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ի հայտ եկած շոկային գործոններով: Ոլորտի ընդլայնմանը զգալի չափով նպաստել է ՀՀ ՌԴ-ից այցելուների մեծ ներհոսքը, նրանց կողմից կացության և հանրային սննդի ծառայությունների նկատմամբ ներկայացվող լրացուցիչ առաջարկը: Նշվածով հանդերձ, հարկ է հաշվի առնել նաև հետհամավարակային վերականգնման գործոնի՝ դեռևս պահպանվող ազդեցությունը՝ չնայած 2021-ին արդեն իսկ 62% տեմպով վերականգնման փաստը նկատի ունենալով:

Համեմատության համար արժե փաստել, որ 2022թ. հունվար-փետրվարին, ռուս-ուկրաինական հակամարտությամբ պայմանավորված շոկային գործոնները դեռևս բացակայում էին կամ ամբողջությամբ չէին ի հայտ եկել, ծառայությունների դիտարկված ոլորտների աճի տեմպերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ շատ ավելի համեստ էին:

Ծառայությունների ոլորտում 2022թ. արձանագրված իրողությունները հանգեցրել են կառուցվածքային համամասնությունների նշանակալի փոփոխությունների: Առաջին հերթին՝ զգալի է ֆինանսական և ապահովագրական ծառայությունների մասնաբաժնի ավելացումը՝ 2021թ. 25,6 տոկոսից մինչև 2022թ-ին 30,6 տոկոս: Որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև տրանսպորտի մասնաբաժինը, իսկ տեղեկատվության և կապի հատվածը, չնայած տարեկան կտրվածքով թողարկման ծավալի զգալի աճին, կառուցվածքային համամասնությունների առումով շոշափելի փոփոխություն չի արձանագրել: Ընդհանուր առմամբ, դիտարկվող 4 ոլորտների մասնաբաժինը ծառայությունների թողարկման ընդհանուր ծավալում 2022-ին գերազանցել է 70 տոկոսը, այն դեպքում, երբ 2021-ի նույն ժամանակահատվածում այն կազմել է 64% (գծ. 3.14):

107 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.14. Ծառայությունների առանձին տեսակների թողարկման մասնաբաժինը ծառայությունների ոլորտի ընդհանուր թողարկման կառուցվածքում, տոկոսներով[108]

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված գործոնների ազդեցությամբ ՀՀ տնտեսության իրական հատվածում տեղի ունեցող ակտիվ գործընթացներից է անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց գրանցումների նկատելի աճը:



Գծապատկեր 3.15. Իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում մարտ-նոյեմբեր ամիսներին գրանցված անհատ ձեռնարկատերերի (ԱՁ) և սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների (ՍՊԸ) թիվը[109]

2022թ. մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրանցվել է 22,7 հազար նոր ԱՁ և շուրջ 10 հազար ՍՊԸ (գծ.3.15): Գրանցումների նշված մակարդակը որակապես տարբերվում է նախորդ տարիներին արձանագրված միտումներից: Այսպես, 2018-2021թթ. նույն ամիսների ընթացքում տարեկան միջինում գրանցվել է 14-15,3 հազար ԱՁ, իսկ ՍՊԸ-ների սկզբնական գրանցումների թիվը տատանվել է 4-5,3 հազարի շրջակայքում: Արդ, էքստրապոլյացիոն ոչ բարդ մոտեցումների կիրառմամբ, կարելի է գնահատել, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ստեղծված նոր իրողությունների պայմաններում գեներացված շոկային տնտեսական գործոնների ազդեցությամբ կարելի է բացատրել 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ՀՀ-ում ԱՁ-ների և ՍՊԸ-ների սկզբնական գրանցումների 32-38%-ը:

2022թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին 1-9 աշխատող ունեցող կազմակերպությունների թիվը ավելացել է շուրջ 5800-ով: Ընդ որում, նախորդ տարիների համեմատությամբ նմանօրինակ

108 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

109 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

կազմակերպությունների թվի աճի տեմպը բարձր է շուրջ 1/3-ով: Նույն ժամանակահատվածում 600-ով ավելացել է 10-49 աշխատող ունեցող կազմակերպությունների թիվը: Այս աճը, ընդհանուր առմամբ համահունչ է նախորդ տարիների միտումների հետ: Այս առումով, կարելի է ենթադրել, որ մինչև 9 աշխատողով կազմակերպությունների թվի ավելացման գործընթացում շոկային գործոնների մասնակի ազդեցությունը նկատելի է, իսկ 10-49 աշխատողով կազմակերպությունների թվի ավելացման պարագայում այդպիսի ենթադրության համար բավարար հիմքեր չկան (գծ. 3.16):



Գծապատկեր 3.16. Կազմակերպությունների թիվը ոչ պետական հատվածում[110]

1-9 աշխատող ունեցող կազմակերպություններում աշխատողների ընդհանուր թիվը 2022թ. նոյեմբերի դրությամբ 131 հազար է, ինչը մոտ 12.2 հազարով ավել է 2022թ. փետրվարի մակարդակից: Ըստ էության, զբաղվածների ընդհանուր թվի մոտ 27%-ը բաժին է ընկնում հենց այսպիսի կազմակերպություններին, միջինում մեկ կազմակերպության հաշվով՝ 2.5 աշխատող: Հաշվի առնելով Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված իրողությունների հետևանքով ի հայտ եկած գործոնների ազդեցությամբ ՀՀ-ում հատկապես փոքր կազմակերպությունների ձևավորման գնահատականները, կարելի է բխեցնել, որ դիտարկվող ժամանակահատվածում, նշված գործոնների ազդեցությամբ, և մասնավորապես՝ ՀՀ օտարերկրյա այցելուների կողմից հիմնադրված փոքր կազմակերպություններում զբաղվածների թվի նվազագույն գնահատականը 5-7 հազար է:

110 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները



Գծապատկեր 3.17. Աշխատողների թվաքանակն ըստ ոլորտների, ոչ պետական հատվածի կազմակերպություններ, հազար մարդ[111]

Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով մինչև 2022թ. նոյեմբեր, Հայաստանի տնտեսության առանձին ոլորտներում զբաղվածության մակարդակի ակտիվ տեղաշարժեր են արձանագրվել: Այսպես, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում 2022թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին զբաղվածների թիվն ավելացել է 9,1 հազարով կամ 39%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դիտարկվող ոլորտում զբաղվածության աճ ևս արձանագրվել է, սակայն բացարձակ մեծությամբ 2022-ի աճից շուրջ 2,5 անգամ պակաս չափով (գծ. 3.17):



Գծապատկեր 3.18. Գործազուրկների թիվն ըստ ամիսների, հազար մարդ[112]

Ընդհանուր առմամբ, 2022թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում ՀՀ-ում գործազուրկների թվի նվազման բավականին բարձր տեմպ է արձանագրվել: Արդյունքում՝ 2022թ. նոյեմբերի դրությամբ հանրապետությունում գործազուրկների թիվը հասել է իր պատմական նվազագույնին՝ 49,6 հազարի (գծ. 3.18): Հաշվի առնելով արտաքին իրողություններով պայմանավորված

111 Տվյալների աղբյուրը՝ Հայաստանի վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ համապատասխան տարիների ամսական զեկույցները

112 Տվյալների աղբյուրը՝ նույն տեղում:

պահանջարկի շոկային աճը, գործազրկության այսպիսի ցածր մակարդակի հաստատման մեջ նշանակալի դերակատարում ունեն Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի պատճառով ձևավորված իրողություններից բխող, և հատկապես՝ ՀՀ ծառայությունների առանձին ոլորտների առաջանցիկ զարգացումը խթանող գործոնները:

Ամփոփում

Ֆինանսաբանկային հատված

- ✓ 2015-2021թթ. ՌԴ-ից Հայաստան դրամական փոխանցումների տարեկան միջին ծավալը կազմել է շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ 2022-ի միայն մարտ-նոյեմբեր ամիսների հանրագումարը գերազանցել է 3 մլրդ ԱՄՆ դոլարի սահմանաչափը
- ✓ 2018-2021թթ. բոլոր ուղղություններից Հայաստան բանկային համակարգով կատարված դրամական փոխանցումների զուտ ներհոսքը դրամային արտահայտությամբ 1,25 տրլն ՀՀ դրամ է, ինչը, մեր գնահատմամբ, կգիջի 2022թ. միայն ՌԴ-ից ՀՀ զուտ ներհոսքի տարեկան մակարդակին
- ✓ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի մինչև 2022թ. նոյեմբերի վերջը, ՀՀ բանկային համակարգի ներգրավված ավանդների շոշափելի աճ է արձանագրվել՝ բացարձակ արտահայտությամբ հասնելով շուրջ 1 տրլն դրամի կամ 2022թ. փետրվարի մակարդակի համեմատությամբ ավելանալով 22%-ով: Ցուցանիշի բացարձակ աճն առնվազն երկու անգամ գերազանցում է նախորդ տարիների ընդլայնման չափերը:
- ✓ 2022թ. մարտ-նոյեմբերին ոչ ռեզիդենտներից բանկերի ներգրավված ավանդների ծավալը բացարձակ արտահայտությամբ ընդլայնվել է 570 մլրդ դրամով՝ 825 մլրդ դրամից հասնելով 1,4 տրլն դրամի (հավելաճի տեմպը՝ 70%): Այս մակարդակը ՀՀ բանկային համակարգի համար պատմական առավելագույնն է:
- ✓ ՀՀ առևտրային բանկերի տրամադրած վարկերի պարագայում, ի տարբերություն ավանդների ներգրավման, 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին որևէ զգալի փոփոխություն չի արձանագրվել:
- ✓ 2022թ. մարտ-նոյեմբեր ժամանակահատվածում ռեզիդենտ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 170 մլրդ դրամով կամ շուրջ 10 տոկոսով: Միևնույն ժամանակ, գրեթե նույն չափով և տրամաբանությամբ նվազել են ռեզիդենտ ձեռնարկություններին տրամադրված վարկերը
- ✓ Ռեզիդենտներին տրված դրամով վարկերը 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին շոշափելի աճ են արձանագրել՝ ավելի քան 300 մլրդ դրամով կամ 15 տոկոսով, որի կեսից ավելին բաժին է ընկել հիպոթեկային վարկին:
- ✓ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին բանկային համակարգում տեղաբաշխված ավանդների ընդհանուր ծավալի զգալի աճը տեղի է ունեցել ավանդների տոկոսադրույքների ոչ էական փոփոխությունների համապատկերում:
- ✓ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ԿԲ ռեպո տոկոսադրույքը աճել է 2,5 տոկոսային կետով, մինչդեռ բանկերի կողմից ներգրավված ավանդների տոկոսադրույքների ավելացում տեղի չի ունեցել: Հակառակը՝ գրանցվել է ավանդային տոկոսադրույքների որոշակի նվազում:
- ✓ ՀՀ բանկերը, մի կողմից վարկերի տեղաբաշխումը կատարում են զգալի չափով սեփական միջոցների հաշվին, մյուս կողմից՝ հաշվի առնելով Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված ֆինանսատնտեսական գլոբալ համակարգում դեռևս պահպանվող բարձր մակարդակի անորոշությունը՝

վարկային ռիսկի արդյունավետ կառավարման հավելյալ գործիքներ են փորձում կիրառել:

- ✓ 2022-ի նոյեմբերի դրությամբ ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթի կուտակային մեծությունը հասել է աննախադեպ բարձր մակարդակի՝ գերազանցելով 190 մլրդ դրամը: Նախորդ տարվա նոյեմբերին բանկային համակարգի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը կազմել է ընդամենը 45 մլրդ դրամ, 2020թ-ին՝ 65 մլրդ դրամ, 2019-ին՝ 56 մլրդ դրամ
- ✓ Բանկային համակարգի չբաշխված շահույթի՝ վերջին ամիսների ընթացքում կուտակված աննախադեպ մակարդակը առավելապես կարճաժամկետ, ոչ գործառնական բնույթի գործընթացների արդյունք հանդիսանալով, այնուհանդերձ ֆինանսական լևերիջի ոչ բարձր մակարդակի պայմաններում, ներքին միջոցների տեղաբաշխման ծավալների ընդլայնման, բանկային ռիսկերի արդյունավետ կառավարման լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում:
- ✓ 2022թ. երրորդ եռամսյակի վերջում ՀՀ բանկերի կողմից թողարկված, շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը գերազանցել է 3 մլն-ը, ինչը 2021թ. նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատությամբ ավելի է 16 տոկոսով, այն դեպքում, երբ 2020-2021-ի նույն եռամսյակում քարտերի թվի աճը կազմել է միայն 5%:
- ✓ ՀՀ բանկերի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող քարտերով ՀՀ տարածքում կատարված գործարքների քանակը 2022թ. երրորդ եռամսյակում կազմել է 42 մլն կամ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ գործարքների քանակը աճել է մոտ 40 տոկոսով: 2022-ի առաջին երկու եռամսյակներում ևս արձանագրվել են աճի նմանօրինակ տեմպեր (համապատասխանաբար՝ 36 և 42%%):
- ✓ ՀՀ տարածքում գործարքների ընդհանուր ծավալը 2022-ի երրորդ եռամսյակում գերազանցել է 1 տրլն դրամը, ինչը նախորդ տարվա նույն եռամսյակի մակարդակը գերազանցում է 31%-ով: Գործարքների ծավալի ամենամեծ աճը Վիզա քարտերով է՝ 38%՝ երրորդ եռամսյակում, 34%՝ երկրորդում և 29%՝ առաջինում: ԱՐՔԱ քարտերով ևս երրորդ եռամսյակում գործարքների ծավալի աճը գերազանցել է 30 տոկոսը:
- ✓ ՀՀ բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով արտասահմանում կատարված գործարքների ծավալը 2022թ. երրորդ եռամսյակում կազմել է 133 մլրդ դրամ, ինչը 2021թ. երրորդ եռամսյակի մակարդակը գերազանցում է 2,2 անգամ: 2022-ի երկրորդ եռամսյակում գործարքների ծավալի աճն էլ ավելի մեծ է եղել՝ 2,7 անգամ:
- ✓ Արտասահմանում թողարկված ՄԻՐ քարտերով ՀՀ տարածքում 2022թ. երրորդ եռամսյակում կատարվել է 2,3 մլն գործարք՝ շուրջ 45 մլրդ դրամ ծավալով: Նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, գործարքների քանակը տասնապատկվել է, իսկ ծավալը աճել է 16 անգամ: 2022-ի երկրորդ եռամսյակում դիտարկվող աճերը ևս տպավորիչ են՝ համապատասխանաբար 10 և 13 անգամ

Արտաքին հատված

- ✓ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում փետրվարի վերջին և մարտին գրանցված ռուսական ռուբլու արժեզրկումը բացասաբար է անդրադարձել արտահանման վրա՝ պայմանավորված ՌԴ-ի՝ ՀՀ արտահանման հիմանական գործընկեր շուկան լինելու փաստով ու դրա արդյունքում ՀՀ արտահանողների մոտ առկա անորոշությամբ:
- ✓ Հայաստանը, 2015 թվականի հունվարի 2-ից լինելով ԵԱՏՄ անդամ երկիր, ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում առերեսվել է արտաքին առևտրի կառավարման նոր մարտահրավերների: Պայմանավորված ռուսական շուկա տարաբնույթ ապրանքների ներմուծման արգելքներով (սանկցիաներով)՝ հնարավորություն է առաջացել ԵԱՏՄ անդամ մյուս երկրները դիտարկելով որպես տարանցիկ երկիր՝ մի շարք ապրանքներ մատակարարել ռուսական շուկա՝ հաշվի առնելով ԵԱՏՄ տարածքում ազատ ապրանքաշրջանառությունը
- ✓ Վառելիքի համաշխարհային գների էական աճի համատեքստում Հայաստանի համար ռուսական գազի գնի անփոփոխ մնալը ենթադրում է, որ տեղական արտադրության ապրանքները գնային առումով դառնում են առավել մրցունակ՝ հաշվի առնելով դրանց ինքնարժեքում ծախսված գազի մասնաբաժինը, որը իր հերթին, նպաստում է Հայաստանից արտահանվող ապրանքների ծավալների մեծացմանը:
- ✓ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում ՌԴ մասնաբաժնի՝ ՀՀ արտահանման կառուցվածքում աճին ի հակակշիռ, 2022 թվականի դիտարկված հատկապես վերջին ամիսներին էականորեն նվազել է ԵՄ երկրների կշիռը՝ հասնելով 16.2% հոկտեմբերին: Չինաստանն ու Շվեյցարիան, ՀՀ արտահանման կառուցվածքում նույնպես ունենալով էական կշիռ, ևս արձանագրել են մասնաբաժնի նվազում: Հատկանշական է, որ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի արդյունքում ՀՀ արտահանման համար հնարավորություններ են առաջացել ոչ միայն ՌԴ, այլև տարաբնույթ այլ շուկաներում: Օրինակ՝ դիտարկված ժամանակահատվածում, նախորդ տարվա համեմատ, 6.7 անգամ աճել են դեպի Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանման ծավալները, որի արդյունքում վերջինիս կշիռը ՀՀ արտահանման կառուցվածքում հունվարի 1.3%-ի փոխարեն հունվար-հոկտեմբերին հասել է 10.1%-ի (8.8տ.կ-ով)՝ գերազանցելով Չինաստանին և Շվեյցարիային: Նույն ժամանակահատվածում էականորեն աճել են նաև դեպի այլ երկրներ, օրինակ՝ դեպի Բելառուս և դեպի Վրաստան արտահանման ծավալները՝ համապատասխանաբար 2.8 և 2.4 անգամ:
- ✓ Պայմանավորված ՌԴ շուկայում տարաբնույթ մատակարարների համագործակցության դադարեցմամբ՝ ՌԴ շուկայում առաջացել են բազմաթիվ հատույթներ, որոնց հաշվին էապես աճել են դեպի ՌԴ արտահանման ծավալները՝ 2.5 անգամ հունվար-հոկտեմբերին՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, որի արդյունքում ՌԴ մասնաբաժինն արտահանման կառուցվածքում ավելացել է՝ հասնելով 41.4%-ի: Մյուս կողմից, ներմուծման կառուցվածքում որոշակիորեն մեծացել է այլ երկրների մասնաբաժինը՝ հանգեցնելով ներմուծման շուկաների առավել բարձր մակարդակի բազմազանեցման՝ թերևս պայմանավորված արտարժույթի՝ դոլարի և եվրոյի նկատմամբ դրամի արժևորմամբ:

Իրական հատված

- ✓ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին տնտեսական ակտիվության ցուցանիշը աննախադեպ բարձր մակարդակներ է արձանագրել: 2012-2016թթ. և 2017-2021թթ. չի եղել որևէ ամիս, որի ընթացքում տնտեսական ակտիվության աճի՝ նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ տեմպի միջին մեծությունը գերազանցի 6 տոկոսը: Ըստ այդմ, տնտեսական ակտիվության բնականոն կամ ներուժային աճի մասին դատողություններում կարելի է որպես մեկնակետ կամ մոտավոր գնահատական դիտարկել հենց ամսական ցուցանիշների տ/տ աճի 6 տոկոսի տիրույթը:
- ✓ 2020թ. նախորդող ժամանակահատվածում արձանագրված միտումների լոգարիթմական մոդելավորման հիման վրա ստացված գնահատումային արժեքները, որոնք, մասնավորապես, վերաբերում են 2022թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածին, ՏԱՑ ընդլայնման կանխատեսումային արժեքը դիտարկում են 6,0-6,5 տոկոսի տիրույթում, իսկ առավել հավանականային արժեքը՝ 6,24 տոկոսն է: Իսկ եթե միտումների մոդելավորման գործընթացում ներառենք նաև 2010-2021թթ. զարգացումները, ապա 2022-ի համար դուրս բերված կանխատեսումային գնահատականը, տարբեր տրենդային մոդելների դիտարկման պարագայում, տատանվում է 2,8-3,3% տիրույթում: Սա նշանակում է, որ 2022թ. դիտարկվող ժամանակահատվածի ՏԱՑ հավելաճի տեմպը բազմապատիկ գերազանցում է նախորդող ժամանակահատվածում դրսևորվող միտումներին համահունչ զարգացումների մակարդակը:
- ✓ 2022թ. հունվար-նոյեմբեր ժամանակահատվածում սննդարդյունաբերության ընդլայնումը 10 տոկոսով չի տեղավորվում տնտեսության երկարաժամկետ զարգացման միտումների շրջանակներում և էապես արդյունք է շոկային գործոնների ազդեցությամբ ոլորտին հաղորդած լրացուցիչ իմպուլսների:
- ✓ 2022թ. հունվար-նոյեմբեր ամիսներին առևտրի շրջանառության աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ կազմել է 16,2%: Աճի այս ցուցանիշը աննախադեպ բարձր է 2009թ-ից ի վեր: Դրան մոտ մակարդակ արձանագրվել է 2017-ին (14,4%), այն էլ՝ 2016-ի զրոյական աճի և 2015-ի 7 տոկոս անկման համապատկերում լիովին բացատրելի է՝ որպես զուտ վերականգնողական գործընթաց: Մինչ այդ՝ 2010-2014թթ. առևտրի ոլորտում շրջանառության աճի տեմպը շատ ավելի համեստ, բայց միաժամանակ՝ կայուն բնույթ է կրել՝ տատանվելով 4-ից 5 տոկոսի շրջակայքում:
- ✓ ՀՀ առևտրի ոլորտում աննախադեպ աշխուժությունն ավելի շուտ շոկային իրադարձության հետևանքով արտաքին պահանջարկի ընդլայնմամբ ակտիվացած գործընթացների արդյունք է:
- ✓ ՀՀ ֆինանսական և ապահովագրական գործունեության հատվածը առավելագույն աճն արձանագրած ծառայությունների ոլորտն է: 2022թ. հունվար-նոյեմբերին ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ընդլայնվել է գրեթե 50 տոկոսով: Ոլորտի ներուժային աճի առավելագույն սահմանը, մեր գնահատմամբ, գտնվում է 20-25 տոկոսի տիրույթում, ուստի, որոշակի մոտարկմամբ, ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտում 2022թ. 11 ամիսներին արձանագրված աճի կեսից ավելին Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված արտաքին

շոկերի ազդեցության արդյունքի փորձագիտական գնահատական կարելի է համարել:

- ✓ Տեղեկատվության և կապի ոլորտում 2022-ին արձանագրված շուրջ 40% աճի կառուցվածքում մոտ 1/3-ի չափով նպաստումը կարելի է վերագրել ներծին, բնականոն, պոտենցիալ աճի գործոններին, իսկ առնվազն 2/3-ի չափով նպաստումը արտաքին տնտեսական շոկային գործոններինն է:
- ✓ 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսների ընթացքում ՀՀ իրավաբանական անձանց պետական միասնական գրանցամատյանում գրանցվել է 22,7 հազար նոր ԱՁ և շուրջ 10 հազար ՍՊԸ: Գրանցումների նշված մակարդակը որակապես տարբերվում է նախորդ տարիներին արձանագրված միտումներից: Մեր գնահատմամբ, Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ստեղծված նոր իրողությունների պայմաններում գեներացված շոկային տնտեսական գործոնների ազդեցությամբ կարելի է բացատրել 2022թ. մարտ-նոյեմբեր ամիսներին ՀՀ-ում ԱՁ-ների և ՍՊԸ-ների սկզբնական գրանցումների 32-38%-ը:
- ✓ 2022թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին ոչ պետական հատվածում 1-9 աշխատող ունեցող կազմակերպությունների թիվը ավելացել է շուրջ 5800-ով: Նախորդ տարիների համեմատությամբ նմանօրինակ կազմակերպությունների թվի աճի տեմպը բարձր է շուրջ 1/3-ով: Շոկային գործոնների դրական ազդեցությունը, հատկապես նկատելի է հենց փոքր կազմակերպությունների թվի ավելացման մեջ:
- ✓ 1-9 աշխատող ունեցող կազմակերպություններում աշխատողների ընդհանուր թիվը 2022թ. նոյեմբերի դրությամբ 131 հազար է, ինչը մոտ 12.2 հազարով ավել է 2022թ. փետրվարի մակարդակից: Հաշվի առնելով Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմով պայմանավորված իրողությունների հետևանքով ի հայտ եկած գործոնների ազդեցությամբ ՀՀ-ում հատկապես փոքր կազմակերպությունների ձևավորման գնահատականները, կարելի է բխեցնել, որ դիտարկվող ժամանակահատվածում, նշված գործոնների ազդեցությամբ, և մասնավորապես՝ ՀՀ օտարերկրյա այցելուների կողմից հիմնադրված փոքր կազմակերպություններում զբաղվածների թվի նվազագույն գնահատականը 5-7 հազար է:
- ✓ Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով 2022թ. փետրվար-նոյեմբեր ամիսներին, Հայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում զբաղվածների թիվը ավելացել է 9,1 հազարով կամ 39%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում դիտարկվող ոլորտում զբաղվածության աճ ևս արձանագրվել է, սակայն բացարձակ մեծությամբ 2022-ի աճից շուրջ 2,5 անգամ պակաս չափով:
- ✓ 2022թ. նոյեմբերի դրությամբ հանրապետությունում գործազուրկների թիվը հասել է իր պատմական նվազագույնին՝ 49,6 հազարի: Գործազրկության այսպիսի ցածր մակարդակի հաստատման մեջ նշանակալի դերակատարում ունեն Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով պատճառով ձևավորված իրողություններից բխող, և հատկապես՝ ՀՀ ծառայությունների առանձին ոլորտների առաջանցիկ զարգացումը խթանող գործոնները:

- Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով ՌԴ նկատմամբ կիրառված լայնածավալ պատժամիջոցներով պայմանավորված՝ շարունակում է պահպանվել աշխարհաքաղաքական անորոշությունների բարձր մակարդակը տարածաշրջանում և էական ռիսկեր ստեղծում ՌԴ ներուժային աճի, Եվրոգոտում էներգետիկ ճգնաժամի հաղթահարման ու տնտեսական աճի հեռանկարների տեսանկյունից: Այս գործոնները շարունակում են ռիսկեր և մարտահրավերներ ստեղծել համաշխարհային տնտեսության կայունացման, հումքի, պարենի և ֆինանսական միջազգային շուկաների, ինչպես նաև արժեշղթաների բնականոն գործունեության ապահովման և վերականգնման առումով113:
- Հայաստանում 2022-ի համար տնտեսական աճի ՀԲ գնահատականը 10,8% է: Այն, չնայած որոշակիորեն ցածր է, քան ՀՀ կառավարության գնահատականները, սակայն մյուս կողմից, 7,3 տոկոսային կետով բարձր է 2022թ. հունիսի կանխատեսումային մակարդակից: Հետաքրքրական է, որ Հայաստանը Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այն փոքրաթիվ երկրների շարքում է, որոնց տնտեսական աճի 2022թ. կանխատեսումը վերանայվել է՝ ավելի քան 7 տ.կ. աճի ուղղությամբ:
- Հայաստանի 2022թ. տնտեսական աճի գնահատականի աճը պայմանավորված է գլխավորապես Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի հետևանքով՝ մեր տնտեսության համար ավելի շատ նպաստավոր գործոնների ազդեցությամբ՝ այցելությունների, բիզնեսի վերատեղակայման, դրամական փոխանցումների մեծ թիվը, ՌԴ տնտեսությունում ազատ շուկայական խորշերի առաջացումը և դրանց հագեցումը հայաստանյան ծագման կամ մեր տնտեսությունից վերաարտահանվող ապրանքներով:
- Էական նշանակություն ունի ՌԴ տնտեսության անկման գնահատականների վերանայումը: Ի հակադրություն նախորդ կանխատեսումների, 2022-ի երկրորդ կիսամյակում ՌԴ կառավարությանը հաջողվեց պահպանել երկրի ֆինանսատնտեսական կայունությունը, էներգակիրների գների բարձր մակարդակի շնորհիվ ապահովել բյուջետային եկամուտների բավարար մակարդակ, նաև՝ տնտեսվարողների և տնային տնտեսությունների աջակցության մեծածավալ փաթեթների կիրառմամբ որոշակիորեն հակակշռել արևմտյան պատժամիջոցների կարճաժամկետ հնարավոր բացասական ազդեցությունները:
- ՌԴ տնտեսության համար 2023 և 2024 թվականների կանխատեսումները վերանայվել են՝ ՀՆԱ անկման խորացման ուղղությամբ՝ համապատասխանաբար 1,3 և 0,6 տ.կ. չափով: Այս հանգամանքը ՀՀ տնտեսության 2023 և 2024 թվականների համար աճի կանխատեսումային մակարդակների նվազեցման ուղղությամբ վճռական դերակատարում է ունեցել: Ըստ այդմ, Հայաստանի տնտեսության համար 2023-ին ՀԲ-ն կանխատեսում է 4,1% աճ, ինչը 0,5 տ.կ.-ով ցածր է հունիսի կանխատեսումից: 2024-ի համար կանխատեսումը 4,8% է, ինչը ևս փոքր-ինչ ցածր է հունիսին կանխատեսած մակարդակից: Սա նշանակում է, որ ՀԲ գնահատմամբ ՀՀ տնտեսության հետագա զարգացման վրա Ռուսաստանի՝ Ուկրաինայում վարած պատերազմի միջնաժամկետ հետևանքները նշանակալի վարընթաց ազդեցության ռիսկեր են պարունակում:

113 ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, 2022/4:

Օգտագործված աղբյուրներ
(ըստ հղման հերթականության)

1. ՀՀ ԿԲ, Արտաքին հատվածի վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx):
2. Թադևոսյան Ռ. Ռուս-ուկրաինական հակամարտություն. տրանսֆերտներ / Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 77-82:
3. ՀՀ ԿԲ, դրամավարկային և ֆինանսական վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx):
4. Տերյան Դ. Ֆինանսական շուկաների արձագանքը ռուս-ուկրաինական հակամարտությանը / Ամբերդ տեղեկագիր, # 2, 2022, էջ 25-30:
5. ՀՀ ԿԲ, ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն (https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx):
6. Աղաբեկյան Է. Ռուս-ուկրաինական պատերազմը և ՀՀ ֆինանսական շուկան. ռիսկեր և սպասումներ / Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 14-24:
7. ՀՀ ԿԲ, Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ (https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx):
8. ՀՀ ԿԲ, Գնաճի հաշվետվություն, 2022/4:
9. Հերգնյան, Ս., 2022, 1.3% աճից 3% անկում. ռուս-ուկրաինական պատերազմի հնարավոր ազդեցությունը Հայաստանի տնտեսության վրա, Հետք: Հասանելի է այստեղ՝ https://hetq.am/hy/article/143564
10. International Monetary Fund October 2021. World Economic Outlook. Recovery During a Pandemic: Health Concerns, Supply Disruptions, and Price Pressures,
11. International Monetary Fund April 2022. World Economic Outlook. War Sets Back the Global Recovery
12. International Monetary Fund October 2022. World Economic Outlook. Countering the Cost-of-Living Crisis
13. Press release No. 22/231 June 2022. IMF Staff Concludes Staff Visit to the Republic of Armenia. Available at https://www.imf.org/en/News/Articles/2022/06/27/pr22231-armenia-imf-staff-concludes-staff-visit-to-the-republic-of-armenia
14. The World Bank 2022. Armenia. Overview. Available at https://www.worldbank.org/en/country/armenia/overview
15. United Nations Conference on Trade and Development 2005. Determinants of Export Performance, p. 49. https://unctad.org/system/files/official-document/ditctab20051ch2_en.pdf
16. Լույս, 2019, ՀՀ տնտեսության արտահանելի հատվածի միտումներն ու զարգացումները
17. Ավետիսյան, Ս., Ավետիսյան, Ա., 2015, Գյուղատնտեսական արտադրանքների

արտահանման աճի և բազմազանեցման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում, ՀՊՏՀ 25-րդ գիտաժողովի նյութեր, էջ 5-6: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/II_Baj._tarmacvac.pdf

18. Այվազյան, Տ.. 2017. ՀՀ արտահանման խթանման հնարավորությունները ԵԱՏՄ անդամակցության համատեքստում, Այլընտրանք գիտական հանդես

19. Հայաստանի վիճակագրական կոմիտե, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը, 2011-2023թթ. հրապարակումներ:

20. Մովսիսյան, Շ., 2019, Ծառայությունների առևտուր. ՀՀ արտաքին տնտեսական գործունեության հեռանկարային սեգմենտը, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն: Հասանելի է՝ https://asue.am/amberd/publication/analytics/trade-in-services-the-perspective-segment-of-the-ra-foreign-economic-activity

21. Հայաստանի Հանրապետության կառավարության 20 հոկտեմբերի 2020 թվականի N 1708-Ն որոշումը Հայաստանի Հանրապետություն թուրքական ծագում ունեցող ապրանքների ներմուծման ժամանակավոր արգելքի մասին: Հասանելի է այստեղ՝ https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149696

22. Վարդանյան, Դ., Վարդանյան, Մ. 2022, Ներքին խնայողություններով տնտեսության բարդության աստիճանի բարձրացման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման հայեցակարգային շրջանակ, Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, 1(67), Տնտեսագետ հրատ., Երևան, էջ 11: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/science/banber/2022-year-1/1.1.pdf

23. Hausmann, R., Hidalgo, C. A., Bustos, S., Coscia, M., Chung, S., Jimenez, J., Simoes, A., Yildirim, M. A. 2013. The Atlas of Economic Prosperity: Mapping Paths to Prosperity, p. 18. Available at https://growthlab.cid.harvard.edu/files/growthlab/files/atlas_2013_part1.pdf

24. Atlas of Economic Complexity, Country & Product Complexity Rankings. Available at https://atlas.cid.harvard.edu/rankings

25. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական և հարկաբյուջետային զարգացումները 2022 թվականի առաջին եռամսյակում

26. Բեջանյան Հ., Կարապետյան Ն. 2022. ՌԴ փոխարժեքի անկայունության և տնտեսական ճգնաժամի ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա, Ամբերդ տեղեկագիր, 2(15), ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատ., Երևան: Հասանելի է այստեղ՝ https://asue.am/upload/files/amberd/2022-year-2/1.pdf

27. Հայաստանի՝ ԵԱՏՄ մասին պայմանագրին միանալու պայմանագիրը. ստորագրվել է 2014 թ. հոկտեմբերի 10-ին, որն ուժի մեջ է մտել 2015 թ.-ի հունվարի 2-ից: Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն: https://www.mfa.am/hy/international-organisations/6

28. Mejlumyan, A. 2022. Armenian trade with Russia Raises Questions about Re-exports. Eurasianet. Available at https://eurasianet.org/armenian-trade-with-russia-raises-questions-about-re-exports

29. Barrera, P. 2022 April 25, Copper Price Update: Q1 2022 in Review. https://investingnews.com/copper-price-update-q1-2022/

30. The Guardian, Copper Price at Lowest Level Since 2020 as Fears over Global Economy Grow. https://www.theguardian.com/business/2022/jul/15/copper-price-at-lowest-level-since-2020-as-fears-over-global-economy-grow-inflation

31. Secrieru, S. 2022. How Big Is the Storm? Assessing the Impact of the Russian–Ukrainian War on the Eastern Neighbourhood. European Union Institute for Security Studies, p. 4. Available at https://www.iss.europa.eu/sites/default/files/EUISSFiles/Brief_10_Impact%20of%20Russian-Ukraine%20war%20on%20the%20Eastern%20Neighbourhood_web.pdf

32. Nagel, D. 2016. What Are Service Exports, and Why Are They Suddenly So Important? Available at https://www.traderready.ca/2016/trade-takeaways/service-exports-suddenly-important/

33. BBC News, 30 September, 2022, What Are the Sanctions on Russia and Are They Hurting Its Economy? Available at https://www.bbc.com/news/world-europe-60125659

34. World Bank. 2023. Global Economic Prospects, January 2023. Washington, DC: World Bank

35. Հովսեփյան Մ. Տնտեսական շոկերն ու հարկաբյուջետային շրջանակը: Արդյո՞ք կդիմանանք ցնցումներին / Ամբերդ տեղեկագիր, #2, 2022, էջ 31-37:

36. Ha, J., M. A. Kose, F. Ohnsorge. 2022. "Global Stagflation." Koç University-TUSIAD Economic Research Forum Working Papers 2204, Istanbul, Türkiye

37. Shapiro, A. H. 2022. "How Much Do Supply and Demand Drive Inflation?" FRBSF Economic Letter, Federal Reserve Bank of San Francisco, San Francisco

38. Kalemli-Özcan, Ş., di Giovanni, J., A. Silva, M. Yildirim. 2022. "Challenges for Monetary Policy in a Rapidly Changing World." ECB Forum on Central Banking, European Central Bank, Frankfurt

39. Ball, L., D. Leigh, P. Mishra. 2022. "Understanding U.S. Inflation During the COVID Era." BPEA Conference Drafts, Brookings Paper on Economic Activity, Washington, DC

40. International Monetary Fund. 2022. World Economic Outlook: Countering the Cost-of-Living Crisis. Washington, DC. October

41. Adrian, Tobias, Christopher Erceg, and Fabio Natalucci. 2022. "Soaring Inflation Puts Central Banks on a Difficult Journey." IMF Blog, August 1, 2022

42. Unsal, D. Filiz, Chris Papageorgiou, and Hendre Garbers. 2022. "Monetary Policy Frameworks: An Index and New Evidence." IMF Working Paper 22/22, International Monetary Fund, Washington, DC

43. Flanagan, Mark, Alfred Kammer, Andrea Pescatori, and Martin Stuermer. "How a Russian Natural Gas Cutoff Could Weigh on Europe's Economies." IMFBlogs, July 19, 2022. https:// blogs.imf.org/2022/07/19/how-a-russian-natural-gas-cutoff -could-weigh-on-europes-economies

44. ՀՀ կառավարության 2023թ. բյուջետային ուղերձ (բացատրագիր), Երևան, 2022